

Universitäts- und Landesbibliothek Bonn

T. Nersēs E. Aštarakecī, katoġikos amenayn hayoc'

Kostaneanc' Karapet


Aġeċsandrapôl, 1909


urn:nbn:de:hbz:5:1-162306

Goussen

3342

Graissen 3347






ԿՈՍՏԱՆԵԱՆՑ Կ.

ՏԵՐՄԵՍ ԱՂՏԱՐԱԿԵՑԻ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Մի հասուած նորա պատմութիւնից



Ա. Դ. Ք Ս Ա Ն Դ Ր Ա Գ Թ Լ

Տպարան Գեղարք Ա. Սանյեացի

1909

3847

1

2

3

4

5

6

7

8

9

10

11

12

13

14

Ն Ա Խ Ը Բ Ա Ն.

«Զիանը համահարք և միոյ մօր սը-
դիք երկպառակք լինիցին, և ոչ միա-
բանք»:

Եղիշէ, Յ.

* * *

Դարեր շարունակ Հայ ազգի պահապանն եղել է
իւր եկեղեցին և նոյնը մնում է միշտ.

Առանց եկեղեցու նորա ազգութիւնը կորչում ան-
հետանում է ազգերի ու ցեղերի անհում ծովի մէջ։ Օ-
տար կրօնի կամ դաւանութեան Հայն յաճախ ինքն
իրեն Հայ չէ համարել։ Կար ժամանակ, որ հայ լու-
սաւորչականութիւնից հրաժարուելն հայ ազգութիւ-
նից հրաժարուելուն հաւասար է եղել։ Աւելի խաւար
ժամանակներում մեր համարիւն կաթոլիկ եղբայրնե-
րը հերձուածող և պիզ էին հոչակում Հայերին և ի-
րենք իրենց ախորժելով ֆռանկ էին անուանում։ Պա-
կաս հայատեաց չեն եղել և մեր աւետարանական եղ-
բայրները։ Բարեբաղդաբար անցել են այժմ այդ չար
ժամանակները։ Այդպիսի ինքնահալած ոգու տիրա-
հըոչակ կոթող մնացին պատմութեան մէջ Լեհաստա-
նի Հայերը, որոնք կաթոլիկ եկեղեցու գրկում մոռա-

ցան մայրենի լեզուն և հայրենական յիշատակները, կորան անհետացան լեհ, թութեն, Մաճառ, Թաթար և այլ ցեղերի ու լեզուների մէջ; Նոցա նման անհետ եղան բիւրաւոր Հայեր, որոնք ակամայ կամ ինքնաբերաբար մահմետականութիւն ընդունեցին. Ներկայիս նոքա թէկ կան տեղ տեղ, բայց իրենց ամենեին Հայ չեն ճանաչում:

Նոր ժամանակի ողին բերեց սակայն նոր համազգային գիտակցութիւն: Միսիթարեան միաբանութիւնը հայ կաթոլիկ ժողովրդին պատսպարեց կորսակից. այսօր Հայոց այդ փոքրահօտ հատուածը նոյն չափ յարած է հայ կաթոլիկ ծէսին, տեսնելով նորա մէջ աղքային աւանդների պահպանութիւնը, որչափ և մայր ցեղը լուսաւորչականին:

Խակ և տհաս է տակաւին այդ գիտակցութիւնը, սակայն ազգի բոլոր հատուածներն էլ գիտակից են, անշուշտ, որ հայկական միութեան համար եկեղեցին մեծ խորհուրդ ունի: Զնայելով խոչընդուներին, նոր գիտակցութիւնն ուրուրեք արտայայտուի է վերադարձով դէպի մայր եկեղեցին: Միսիթարականն այն է, որ վերադարձի պահանջ զգացել են նոքա, որոնք շօշափել են արդի լուսաւորութեան ճառագայթները: Եւ մենք տեսնում ենք, որ ժամանակակից լոյսի առաջնորդութեամբ գիմում են ոչ թէ հայութիւնից դէպի օտարութիւն, այլ ընդհակառակը: Այսպէս ժԹ. դարի առաջին կիսում կաթոլիկութիւնից դէպի Հայոց եկեղեցին անցան միքանի լուսաւորեալ գիտնական հայ վարդապետներ, անշուշտ, ազգութեան գաղափարն

ընդգրկելով, այլ ոչ կրօնի, որի համար նոքա ունեին յարմարութիւն և այլ կերպ վարուելու: Դէպի մայր եկեղեցին անցան և աշխարհական դասից լուսաւուրեալ և զիտուն մարդիկ: Այս և այն դասերից օրինակները, բարերազգաբար, եղական չեն*. Նոքա ապացուցանում են, որ հայ անհատներ ու խմբեր, կաթոլիկութիւնից զէպի մայրենի եկեղեցին անցնելով, ցանկացել են վերահսկատել իրենց կապն հարազատ աղջութեան հետ:

Կան այս օրինակներ և հակառակ հոսանքի, սակայն կեանքի մէջ նոքա աւելի ևս խրատական փաստեր են մեր մտքի ճշմարտութեան: Յակոբոս պատրիարքի օրով (1848—1858 թ.) Հալէպի առաջնորդ, Նիկողայոս արքայիսկոպոս († 1874 թ.), թէհ կաթողիկութիւն ընդունեց, բայց շուտով զզջման զիր ուղղելով պատրիարքին, վերստին զիմեց մայրենի եկեղեցու ծոցը: 1858 Ապրիլի 13 ին, երբ նա իշխանների և քահանաների ուղեկցութեամբ մտաւ իւր եկեղեցին, ազդու ատենաբանութեամբ իւր զզջումն յայտնեց նաև իւր հօտի առաջ, այդաեղ նա իւր ուրացութեան ժամանակի գառնութիւնն համեմատեց Հրէից գերութեան տառապանքների հետ, առաւելապէս շշտե-

*) Հանրածանօթ են՝ Կարնեցին Սերովը, Սալանթեան Միքայէլ, Թէոդորեան Սարգսին, Սյմազեան Գաբրիէլ, Գալֆայեան Ամբրոսիոս և Խորէն, Պարոնեան Սուքիստ, Օրմանեան Մաղաքիա և այլ վարդապետները, Շիշմանեան գօքառը Յովոնէփ (Ծերենց), և այն հականասունեան խումբը, որ 1879-ին կ. Պօլսում զիմեց Հայոց եկեղեցին Վարժապետեան Ներսէս պատրիարքի օրով:

լով ազգային ոգու նուաստացումը, որ տանջում էր նորան: «Առ գետս Բարելացւոց անդ նստէաք և լայաք որպէս յիշեցաք մեք անդ զՍիօն» այս էր նորա բնաւրանը, որ իբրև մշտական բնաբան է մնում բոլոր այնպիսիների համար, որոնք իրենց մայր Սիօնից հեռանում են կամայ թէ ակամայ: Փարիզի թերթերն համակրութեամբ ողջունեցին արքեպիսկոպոսի վերդադրձն, ինչպէս որ յառաջ էլ պարսաւել էին նորա ուրացութիւնը: Նոյնպիսի բնական խղճահարութեան վկայ է Կ. Պոլսում արդի մի քարոզիչ եպիսկոպոս, որ երբեմն անգլիկան եկեղեցում որոնեց փրկութեան ճանապարհն և, չգտնելով, նորից մտաւ իւր հարազատ մօր գիրկը: Այսպէս և ուրիշ ոմանք:

Սիսալ չպիտի լինի, եթէ ասենք, որ մոլորութիւն և ազգաւեր մոլորութիւն է քարոզել թէ հայութիւնն ինքն իրեն առանց եկեղեցուն կարող է ապրել և պահպանել իւր գոյութիւնը: Այդ կարող են և թող ասեն օտարները, որովհետև նոքա միջոց ունին, եթէ ուզենան, և առանց եկեղեցու պահպանել ազգային ոգին: Կաթոլիկ եկեղեցին երեքհարիւր միլիոնից աւելի հետեւող ունի, որոնք մեծ մասով վայելում են քաղաքական ազատ կացութիւն և իրենց ազգային շահերի գիտակցութեամբ զօրացած հետամուտ են ոչ մի կախումըն չունենալ եկեղեցուց: Այլ է Հայոց եկեղեցու հօտի վիճակը. նորա բնորոշ գիծն այն է, որ ուրիշ ազգ ու ցեղ չկայ նորա մէջ բացի Հայից. նորա պաշտօնեաները գրսից մի այլ եկեղեցուց և ազգից չեն գալիս օտար լեզուով և աւելի ևս օտարոտի հայեացք-

ներով. հաղսկոպոսին և քահանային Հայն ինքն է ընտրում և ինքն իսկ պահում առանց ուրիշի օգնութեան։ Ազգայնացած է այդ եկեղեցին շատ զարեր յառաջ յատկապէս ազգը պահելու համար։ Եւ այդ է պատճառ, որ այդ եկեղեցին երբէք ունեցած չէ և չունի մարդորսութեան ձգտումն, մի բան, որ յատուկ է համաշխարհային քաղաքականութեան հետեօղ եկեղեցիներին։ Հայի սրտի հետ Հայոց եկեղեցին խօսում է շատ ու շատ ազնիւ յիշատակներով՝ լեզուն հարազատ, ծէսերն ու տօներն հարազատ, պահած աւանդներն հարազատ Նորա հոգու հետ խօսում են իւրիսկ պատմական հողի վերայ իւր քրտինքով կանգնած և իւր արիւնով պաշտպանած սրբավայրերը։ Մի պարզ անպանոյն խաչքար՝ դաշտում կամ ձորում արձանացած իրրեկ հին սրբութեան յիշատակ շատ աւելի քաղցր ու հասկանալի է մըմնջում Հայի հոգու հետ քան ստուար ստառածարանական շատ հատորներ։

Այս ամէնից յետոյ հասկանալի է թէ ինչու Հայի սիրտը այնքան սերտ կապուած է հայրապետական աթոռի հետ։ Զէ՞ որ այդ աթոռն էլ հնագոյն սրբութիւններից մէկն է։ Ազգի միութեան և ամբողջութեան դարաւոր շղկապն է այդ աթոռը։ Թուլացնել այդ շղկապը կընշանակէ զօրացնել ազգի քայլայման և կազմալուծութեան պատճառները։

Ս. Լուսաւորչից սկսած մինչև Տ. Մկրտիչ Ա. շատ հոյակապ անուններ իրենց միծութեան փայլն այդ աթոռից են առել և իրենց հանձարով ու սրբութեամբ աւելի ևս նուիրագործել բարձրացուցել են աթոռի

պատմական նշանակութիւնը:

Այսօր իւր վերջին անշքութեան հասած այդ աթոռը դարձեալ նուիրական է Հայի համար, որովհետեւ նորա ծագման հետ կապուած են ոչ միայն Ս. Լուսաւորչի և Ս. Տրդատ արքայի, Հայոց տունը քրիստոնէական լոյս բերողների, անունները, այլ և Հային աղքային գիտակցութիւն պարզեօղ Ս. Սահակի և Վուամշապուհ արքայի, և նոցա շնորհիւ հանդէս եկած՝ Ս. Թուրքմանիչների անունները, որոնց զլուխն էր ազգիս մեծ ուսուցանօղն Ս. Մեսրոպ Մաշտոց:

Հայրապետական աթոռի գեկավարութեան ներքոյ գարեր շարունակ Հայ ազգն ուսաւ, պահեց ու ծաղկեցուց գիր, գրականութիւն, հարազատ մտաւորականութիւն և, որ ամենից զլխաւորն է, մի զողորիկ բազմագանձ լեզու: Դեռ այսօր իսկ գրդուեցնել այդ աթոռը կընշանակէ խախտել խափանել Հայոց լեզուի ուսման և հայկական կրթութեան հիմունքները:

Հայրապետներն իրենց բնական կոչումն են համարել Ս. Լուսաւորչի և նորա արժանաւոր յաջորդների հետքով ընթանալ և եկեղեցու գաւիթ համարել ազգի մանուկների կրթութեան և գաստիարակութեան տունը: Այդ գաւթին սպասաւորել են նոքա ինչպէս Աստուծոյ տաճարին:

Դարեր շարունակ Հայ ժողովուրդն ընտելացել է այդ գաղափարին: Լոյսը Ս. Լուսաւորչի աթոռից ընդունելն ազգի մշտական տենչանքն է եղել. դորա համար նա չէ խնայել ամեն նիւթական զոհարերութիւն: Բանիս տպացոյց կտակներն ու հրիտակները, հին ու

նոր բազմապատիկ նուիրաբերութիւնները, որոնք ազգի զանազան դասակարգերն անխնայ թափել են եկեղեցու գոնձանակի մէջ գարեր շարունակ: Յայտնի է, որ Լազարեան Ճհմարանի հիմնադիրն, Յովակիմ Լազարեան († 1826), իւր ուսումնարանն Հայոց եկեղեցու հետ ամուր կապելու համար խնդրեց Տ. Եփրեմ կաթողիկոսին և յատուկ մի վարդապետ նշանակել տուեց իրեւ ուսուցիչ տառածարանութեան և միանգամայն տեսուչ:

Ազգի միութեան և ամբողջութեան դարաւոր յենարանն և ազգային կրթութեան մշտական հովանաւորն ու պաշտպանը, հայրապետական աթոռն, այսօր էլ նոյն զօրութիւնն ունի ինչ որ երկար ու ճիշ շըշջաններում: Անշքութիւնն, աղքատութիւնն, ինչ ինչ ժամանակաւոր հարուածները կամ անյարիր փոփռիութիւնները կարող են արատ ու բիծ գնել այս ու այն գործող անձի վերայ, որ պատճառ է եղել անշքութեան, բայց նոքա անզօր են խախտելու խափանելու Մայը Աթոռի դարաւոր կեանքի պատմական խորհուրդը: Մոռացութեան տալ այդ՝ նշանակում է զաղափար չունենալ Հայ քրիստոնէի հոգեբանութեան մասին: Նեայի տփերից մինչև Հնդկական հոռաւոր կղզիները, Նեղոսի հովակից մինչև Նոր Աշխարհի հայկական զաղութները զանազան պետութիւնների անմիջական խնամքն ու հովանին վայելող բազմաչարչար հայ ժողովութեն անխարդախ հաւատարմութեամբ ծառայում է իւր հովանաւորին յատկապէս մի հոգեոր ազատութիւն վայելելու մխիթարութեամբ. այն է

պաշտել իւր եկեղեցին իւր Մայր Աթոռի առաջնորդութեան տակ:

* * *

Յուսալիր հայեացք ուղղելով գէպի ապագան,
հարկ է սակայն գէթ հարեանցի մտաբերել թէ ինչն է
եղել պատճառ Մայր Աթոռի արդի անմիթար կացութեան,
որպէսզի փոքր ինչ ուղղուին թիւր ու թերի
հայեցուածքները նորա կոչման վերայ:

Ճշմարտութեան հակառակ չպէտի լինի, եթէ ասենք, որ այլ և այլ պատճառների մէջ ամենից հաւասարին և ծանրակշիռն այն է, որ ժԹ. դարի առաջն տարիներից սկսած կաթողիկոսական իշխանութիւնն և հեղինակութիւնն իւր անկման դարձակէտի վերայ է կանգնել:

Այդ երեսոյթին նպաստաւոր եղան միքանի հանգամանքներ, որոնց մէջ առաջին տեղն է զրաւում Դաւիթ-Դանիէլեան խորվութիւնը, որ շարունակուեցաւ մօտ տասն տարի: Կաթողիկոսական գահի ժառանգութեան համար մըցող երկու կուսակցութիւնները, Դաւթեան և Դանիէլեան, եկան յեղաշրջելու Մայր աթոռի աւանդական կացութիւնը: Դանիէլեան կուսակցութեան մէջ ևսանդու զործիչ էր Տ. Ներսէս Ե. այն ժամանակ երեսուն տարեկան մի վարդապետ և հասարակ միարան Ս. Էջմիածնի այն առաւելութեամբ միայն*, որ Տ. Դանիէլ կաթողիկոսի հո-

*) Դիւտն Հ. պատմ. Ա.-Բ. 151.

գեոր զաւակն էր։ Յաղթանակը մնաց Դանիէլեաններին, որոնք տուին աթոռին մի քանի յաջորդներ։

Տեղը չէ բացատրել թէ կուսակցութիւններից որն աւելի համապատասխան էր ազգի և եկեղեցու շահերին։ Այդ մեզ շատ հեռու կըտանէր։ Կ'ասենք սակայն, որ այնտեղ, ուր մարդիկ կրքի կուրութեամբ են խարխափում հասարակաց պողոտայի վերայ, դէպքերի և շարժառիթների իսկութիւնը դտել և մէկի կամ միւսի կարեռութիւնը ճանաչել շատ զժուարին է։ Մի բան այնու ամենայնիւ շատ պարզ է, որ երկու կուսակցութիւններն էլ քաղաքականութեան անհմուտ և քաղաքագիտութիւնից զուրկ դեկավարների ձեռքի տակ ծառայում էին մի աւելի երկայնաբազուկ քաղաքականութեան, որ զործում էր Վուփորի ափերում և հիստորիային մայրաքաղաքում։

Կուսակցական յաղթանակի համար Դանիէլեանները չքաշուեցան խախտելու հին աւանդութիւնն և գործելու հակականոնական գեղծումն ուղարավութիւնը կաթողիկոս օծուեցաւ Յագրեանդայ Ս. Յովհաննու կամ Երեքխորան վանքում 1802 Մայիսի 25-ին այն ժամանակ, երբ մի տարի յառաջ Ս. Էջմիածնի Մայր Եկեղեցում, որ հայրապետութեան բնական աթոռն է, կաթողիկոսական իշխանութիւնն օծմամբ ստանձնել էր Տ. Դաւիթ Զ.։ Այդ յաղթանակի համար նոքա գումարեցին մի այնպիսի ժողով, որը ոչ մի տրամաբանութեամբ չէր կարող ազգային կամքի օրինական

*.) Տ. Դանիէլ Ա. 1807—1808, Տ. Եփրեմ Ա. 1809—1831.
Տ. Յովհաննէս Բ. 1831—1842. Տ. Ներսէս Ե. 1843—1857.

յայտաբար լինել։ Երեքխորանը կաթողիկոսական
ձեռնադրութեան յատկացած վայրը չէր*։ Ժողո-
վականները պատահական մարդիկ էին և չունեին լիա-
զօրութիւն ազգի ներկայացուցիչ լինելու։ Ժողովին
նախագահում էր Ս. Էջմիածնի հակաթոռ ճանաչուած
Աղթամարու կաթողիկոսը։ Թէև ժողովում էայլն 18
վարդապետ և 13 եպիսկոպոս, և եթէ հաւատ ընծայենք
Տ. Դանիէլի կոնդակին, մասնակցում էին մօտ երեք
հազար մարդ, սակայն հաւատնական է, որ նոցա մէջ
էլ կային Աղթամարու միաբաններ և ժողովուբդ, այս
ամենից զատ պէտք չէ մոռանալ և այն, որ բացառիկ
ստիպողական հանգամանք չկար երեխորանի արա-
րողութեանը մզումն տուօղի Բայց և այնպէս Բաղրե-
ւանգայ այդ ժողովն հանդէս բերեց մի նոր հակաթոռ
հայրապետ, որ եթէ պէտքերն յաջողէին այնաւել
հաստատուելու, պէտք է հղած աթոռների՝ Սոոյ,
Աղթամարու և Գանձասարայ վերայ աւելսնար և չոր-
րորդն իրեկ հակաթոռ Ս. Էջմիածնի։

Այդպիսով՝ միենոյն հայրապետական աթոռի հա-
մար յայտնուեցան երկու գահակալ, երկուսն էլ եպիս-
կոպոսներ ձեռնադրեցին, երկուսն էլ միւսոն օրհնե-
ցին, և նուիրակներ ցրուեցին ազգի մէջ։ Աղդը պա-

*.) 1893 Սեպտեմբերի 26-ին Տ. Մկրտիչ Ա. իւր հայրապե-
տական օծումն ընդունեց Մայր եկեղեցու առջև յատուկ այդ հան-
դէսի համար կապած տախտակամածի վերայ իրեկ թատեքարեմի։
Նոյն իսկ այդ շեղումը ժամանակին գայթակութիւն պատճառեց
և միաբանութեան կողմից բողոքի առարկայ եղաւ, և իրաւացի՝
քանի որ ձեռնադրութիւնն և օծումն իրեկ խորհուրդ կարող են
մատակարարուել միմիայն առ այդ յատկացեալ սեղում։

ուակտեցաւ. մէկի լոյսը միւսին խաւար էր երեսւմ,
մէկի սուբրը միւսին անսուբր, մէկի օբէնքը միւսին
անօրինութիւն, և այս՝ միենոյն հկեղեցու, միենոյն
հոգեսր ծնողի, հարազատ զաւակների մէջ:

Տիուր հետեանքներն հասկանալի են ամենքին:
Օտարներն անգամ չէին կարող ըմբռնել կրքի այդշափ բուռն արտայացառութիւն: Երբ Դանիէլեաննեւն
հետամուտ եղան Օսմանիան սուլթանի միջոցով երեւանի խանին համոզելու, զահընկէց անել Դաւթին,
խանը պատասխանեց. «Հայք զօրէնս ունին, ասաց, զօծալ հայքապետն անփոխ պահէլ միջնէն չէ յմանչ» և այսպէս դէթ առ ժամ մի խափանեց հակառակորդների խորհուրդը*:

Արդ՝ թողնէնք նիւթական հարուածներն ու կորուստները, թողնէնք և քաղաքական հաշիւներն ու նպատակները, ուշազրութեան առնինք միմիայն հայրապետական աթոռի հոգեսր հեղինակութեան խնդիրը. ինչ վարկ ու կշիռ կարող էին ունենալ Դաւթի և Դանիէլի ձեռնազրած հպիսկոպոսները. կամ ինչ հոգեսր բարիք կարող էին մատակարարել նոցա օրհնած միւսոնը տարսծող նուիրակները. Ակներկ է, որ ոչինչ: Եւ այն, ինչ որ նոցա միջոցով տարածուեցաւ, էր միայն սիրոյ պակասութիւն, վոհաղարձ ատելութիւն և զատապարտելի անտարբերութիւն, իսկապէս այն, ինչ որ լինում է սովորաբար, երբ կուսակցութիւնները զիմում են ծայրայեղ զեղծումների և վարկարեկութեան: Այդ ամենի երեսից կաթողիկոսական

*.) Դիւան Հ. պատմ. Զ. 356—360.

հեղինակութիւնը գահավէժ էր լինում և կրքերին խոռ
դալիկ եղած կարծես կորցնել էր սկսում իւր հին
վարկը առանց նորը վաստակելու:

Դաւթին յաջողեցաւ վերջապէս հրապուրել Դանիէ-
լին էջմիածին, նորա բերանից մեղայազիր առնել և
նուաճել իւր հակառակորդին երկաթէ զաւազանով:
Իւր մեղայազրի մէջ, որ ստորագրել է 1802 Դեկտեմ-
բերի 31-ին և որի տակ ձեռք են դրել իրրե վկայ
տասներկու արքեպիսկոպոս, Տ. Դանիէլ ասում է.
«Օծանիլն իմ անդ և օրհնելն զմիւոռն են ընդդէմ
սրբոյ աթոռոյն և արժանընտիր օծելոյն Աստուծոյ
և նախնի հարցն կանոնաց, քանզի Երեք-
վանքն, որ ի Բագրիանդ, չէր աթոռ ընական և
ես յանդգնեալ կամեցայ առնել զայն աթոռ
ընդդէմ էջմիածնիս»*:

Կասկած չկայ, որ Դանիէլի այս մեղայազիրն ար-
դիւնք է Դաւթի բոնաւորական պահանջին: Այս հան-
գամանքն և գեղեցիկ պատկերացնում է երկուսին:
Մէկը, Դաւթի, իսկապէս մալթմացումն է նախորդ
հայրապետների միտոլետական դիցի, հետամուտ
բարձր պահելու իշխանութեան դրօշակն և թոյլ չտա-
լու տեսնել ալդ իշխանութիւնը տկարացած կամ այս
ու այն անձի ձեռին խաղալիկ դարձած: Միւսը, Դա-
նիէլ, թէպէտե առաքինի, այլ մեղկ ու կամազուրկ,
արդէն վարկարեկ եղած իւր հակականոնական ձեռ-
նադրութեամբ, և տեղի տուօղ այնքան, որ բոնաւո-
րական հրամանի և ձնշման տակ ստորագրել կարող

*) Դիւան Հ. Պատմ. է. 398.

էր մի այնպիսի մեղայագիր միմիայն իւր կհանքը
փրկելու համար:

Երկու ախոյեաններն ունէին և իրենց հետեղները.
սոքա ծնունդ էին հին վանական կազմակերպութեան երկու տարրեր հոսանքների, որոնք միշտ էլ եղել են, և որոնք այդ ժամանակ ընդհարուեցան շատ կատաղի կերպով:

Բանն այս է, որ վանական դասի մէջ զօրեղ էին
նոքա, որոնք ջերմ յարած էին կաթողիկոսի աթոռին
և անբողոքելի էին ճանաչում նորա իշխանութիւնը.
Նորա կտպածը կտպած էր և կտրածը կտրած: Կաթո-
ղիկոսն այն ժամանակ նախ և յառաջ Ս. Էջմիածնի
վանքի լիազօր տէրն էր և պատասխանատուն տիրող
քաղաքական իշխանութեան առաջ, նորան և ճանա-
չում էին իրեն ազգի օրինական ներկայացուցիչ բոլոր
այն տէրութիւնները, որոնց ճպատակութեան մէջ էին
Հայերը: Վանական դասի մէջ սակայն կային և այնպի-
սինները, թուով բաւական ստուար, որոնք ունէին իրենց
հանգի գաղափարական ձգտումներ, որ ուզում էին ան-
շուշտ իրականացած տեսնել, մէկ այն, որ կաթողիկոսի
միապետական իշխանութիւնը սահմանափակուի մի
ժողովով և միւս այն, որ Ս. Էջմիածնի վանքն և Հայոց
եկեղեցւ ժողովուրդն ազտառին մահմէսական իշխա-
նութեան լծից և քրիստոնեայ պետութեան հովանու
տակ մտնին: Կուսակցական պայքարի ընթացքում զոր-
ծերի և դէպքերի յաջորդականութեան մէջ Դանիէ-
լիանները մտան Ռուսաց ազգեցութեան շրջանակը,
իսկ Դաւթեանները Պարսից: Յաղթանակը միաց առա-

Ջինին: Թէպէտե Տ. Դաւիթ Զ., որին Օսմանեան և
Պարսից տէրութիւններն հաստառութեան հրովար-
տակներ տուել էին, բուռն զօրութեամբ իշխեց մինչև
1807 Մայիս 14, ընդամենը վեց տարի, սակայն Տ.
Դանիէլ Ա. ի վերջոյ ժառանգեց աթոռն իբրև ազգի
ընտրած և Ռուսաց պաշտպանութեամբ միւս մահմէ-
տական տէրութիւններից ճանաչուած կաթողիկոս, նա
կառավարեց մօտ մի տարի ու կէս, այն է 1807 Մա-
յիսից մինչև 1808 Հոկտեմբերի 9. Իսկապէս նա մի ան-
ուանական կաթողիկոս էր մեծ մասով հիւանդ և առ-
հասարակ զուրկ ինքնուրոյնութիւնից: Նորանից աթո-
ռին յիշատակ մնաց սակայն մի հաստառութիւն, որ
այն ժամանակ կոչւում էր բարձրագոյն սուրբ ժողով
կամ խորհրդարան և կամ Սիւնհողոս: Դեռ այն ժամա-
նակ, երբ Տ. Դանիէլ աքսորի մէջ էր Մարտացում,
1806 Յուլիսի 10-ին նա առաջարկեց միաբանութեանը
կազմել այդ Սիւնհողոսը. այնահեղ նա իւր սահմանա-
դրական կանոնն այսպէս ձեակերպեց*:

«Կ աթողիկոսն առանց եպիսկոպոսաց և
եպիսկոպոսք առանց կաթողիկոսի մի ևս
իշխանուց յայս մհետէ եղական կամօք իւ-
րեանց իշխանաբար առնել ինչ գործ, որ ի-
ցէ պատկանեալ եկեղեցւոյ Հայաստա-
նեայց, և կամ Մայր Աթոռոյն՝ մերում Ա. էջ-
միածնի, և կամ հասարակութեան ազգի
Հայոց»:

Այս կանոնը պարզ հետեւողութիւն է Կղեմայ կամ
*) Դիւան Հ. Պատմ. Ա—Բ. 210.

Երկ
կան
թիւ
պար
հաս
25-
Ներ
բոլ
կար
կար
տրա
կան
ժամ
գար
մտե
թու
կղե
181
դէմ
տա
«Պ
ուս
եկե
կան

Երկրորդ Առաքելականք կոչուած հին և կեղեցական կանոնների լի՛, յօդուածին,* որը ծանօթ էր և Դաւթին և բոլոր եպիսկոպոսական դասին և վաղուց պարտաւորական իսկ:

Մարադայից գրով խոստացած այս Սիւնհողոսի հաստատութիւնն իրագործեց Տ. Դանիէլ 1808 Մայիսի 25-ին, արդէն մի տարի յառաջ նորա հոգէորդին, Ներսէս, ձեռնադրուել էր եպիսկոպոս և կաթողիկոսի բոլոր ձեռնարկութիւնների նախաձեռնողն էր. նա էլ կարգուեցաւ նոր կազմած Սիւնհողոսի անդամ:

Կարծես ժամանակ էր, որ աթոռի գործերը բարեկարգուէին Սիւնհողոսի միջոցով. բայց շատ չքաշեց և տրատնջները նոր հաստատութեան դէմ, ինչպէս ընական էր սպասել, զօրացան: Ինչպէս որ Տ. Դանիէլի ժամանակ Ներսէս արդէն միայնակ էր իշխում կաթողիկոսի և Սիւնհողուի վերայ, այնպէս էլ շարունակուեցաւ նորա յաջորդի Տ. Եփրեմի օրով, որը Ներսէսի մտերիմն էր և Դանիէլից ոչ պակաս թոյլ և անզօր մարդ, Թուեի թէ ներքին այդ անմիխթար վիճակն և զայթակեցնեց մտքերը: Կ. Պօլսոյ պատրիարքն, Աբրահամ, 1814 Մայիսի 3-ին բողոքելով մի կարգադրութեան դէմ, որ արել էր Սիւնհողոսը, զրում է թէ այդ հաստատութիւնն անընդունելի է, որովհետեւ, ասում է, «զաստուած արելք ահանայ ապետդ, որ աստուածատիպ գագաթան օծութեամբ ինքնիշխան զլուխ եկեղեցւոյ ես յարգեալ, ընդ էծով հպատակու-

*) Գրչեայ կանոնագիրք. — ա. նաև Արիստ. եղ. Դաւթեան կանոնք Ս. Ժողովոց, Թիֆլ. 1904. եր. 111.

ԺՂ.

թեան արկանէ*: Այսպէս էր հասկացել նա Սիւն-
հողոսի իրաւասութեան սահմանը: Այդ իսկ ժամանակ
Տ. Եփրեմ նշանակեց Ներսէսին Թիֆլիսի Հայոց ա-
ռաջնորդ, կարծես, ուզելով ապատուել նորա բռնակա-
լական միաւումներից, թէն հաւանականն այն է, որ
Եփրեմ աւելի հակամէտ էր նախկին անհաշիւ և ան-
պատասխանատու դրութիւնը վերականգնելու համար
բոլորովին ջլատել Սիւնհողոսի զօրութիւնն, ինչպէս
և եղաւ:

* *

Դաւիթ-Դանիէլեան այս շարժումներով մի ան-
գամ խանգարուած և անշքութեան հասած Աթոռն ըս-
կսեց խաղալիկ լինել այս և այն հոսանքին և անկա-
րող եղաւ գրաւել իւր վայելուչ տեղը: Հոսանքներից
ամենավտանգաւորն այն կաթողիկոսներն յառաջ բհ-
րին, որոնք հետամուտ եղան միջազգային ճանապար-
հով Աթոռին քաղաքական նշանակութիւն տալ առանց
ունենալու առ այդ կարեոր հմտութիւն: Այդպիսի
կաթողիկոսներին վիճակուեցաւ միայն կոյք գործիք
լինել ուրիշների ձեռին: Նոցա մէջ առաջին տեղն են
գրաւում Տ. Դանիէլ և իւր յաջորդը Տ. Եփրեմ: Որքան
և ձգտում էին նոքա, զօրացած Ռուսաց պաշտպանու-
թեամբ և Ներսէս արքեպիսկոպոսի զործակցութեամբ,
Աթոռին աւելի բարձր զիրք տալ, այնքան աւելի նը-
պաստեցին նորա հոգեսոր հեղինակութեան անկմանը,
ինչպէս եղաւ այդ Տաճկաստանում 1826-ից մինչև

*) Մսերեան Մ. Պատմ. կաթող. եջմիածնի, 184:

1844 թուականը: Նոցա կերած ազոլից առնուեցան նոցա յաջորդների ատամները: Միայն Տ. Գէորգ Դ. գիտցաւ իրեն հեռու պահել քաղաքական դործիք լինելու երկսայրի վիճակից:

Աթոսի հեղինակութեանը միծ հարուած էր և նուիշրակութեան դադարումը, որ քաղաքական յաւակնութիւնների զոհն է խսկապէս: Յառաջ հօտի և Աթոսի մէջ կար անմիջական յարացերութիւն: Նուիրակներն իրենց հետ տանելով ո, միւսոնը, մանում էին ժողովքրդի մէջ, հոգեոր հանդէսներով և խրատներով կազդուրում էին մտքիրը: Ժողովուրզը բաւն ազրիւրից տեղեկութիւններ էր առնում կեղբոնի և նորա միաբանութեան մասին, տեսնում գնահատում էր իւրաքանչիւր նուիրակի արժանիքն և այն: Երբ նոքա վերադառնում էին աթոս և իրենց նուիրակութեան կրկնակի հաշիւները զեկուցանում էին, նիւթականն և բարոյականը, միենոյն ժամանակ հաղորդում էին և այն կարծիքներն ու ակնկալութիւնները, որոնք պէտք էին լինում Աթոսին այս կամ այն խնդրի վերայ: Այսպէս տեղի էր ունենում միշտ կարծիքների ու տեղեկութիւնների կենդանի և ոչ ձևական փոխանակութիւն և կշռագատութիւն, որով կենդանութիւն էր մըտնում և գործափարութեան մէջ: Նուիրակութեան դադարելով Աթոսը զրկուեցաւ այն օգուտներից, որ նատալիս էր, և հօտը զրեթէ անտեղեակ է միշտիրերի խսկական վիճակին: ԺԹ. դարի հայրապետները, մանաւանդ Տ. Եփրեմ և Տ. Յովհաննէս, մէծապէս զգացին կորուստի ծանրութիւնը: Վորձեցին վերա-

կանգնել նուիրակութիւնը, բայց քաղաքական սխալ ների պատճառով արգէն ուշ էր, Տ. Ներսէս դեռ իւր առաջնորդութեան ժամանակ Բեսարաբիայում, օդուելով Պալամանիէի տրամադրութիւնից*, երկու անգամ յիտ դարձուց Տ. Յովհաննէս Հ. կաթողիկոսի նուիրակներին, պատճառարանելով թէ նոքա ժողովուրդ են կեղեքում:

Անտարակոյս Աթոռի հեղինակութեան ամուր պատռանգանն է եպիսկոպոսական դասը: ԶԵ որ կաթողիկոսը ոչ այլ ինչ է, եթէ ոչ եպիսկոպոսների գըլութի կամ եպիսկոպոսապես: Հին ժամանակներից կաթողիկոսներն ունեցել են 12 աթոռակից եպիսկոպոս, որոնք օգնել են նոցա իրեն մշտական խորհրդականներ և զործակիցներ**: Մինչեւ անդամ աւանդութիւն կայ, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ունեցել է երեսուն և վեց աթոռակից***: Խոկ աւելի ուշ եպիսկոպոսութիւնն այնքան զարգացած էր չայլոց մէջ և այնքան տնուանի, որ Տ. Պետրոս Գետաղարձի օրով ԺԱ. դարում կաթողիկոսի տանն եղել են տասներկու եպիսկոպոս և չորս վարդապետ և ընդհանրապէս

*) Յօդ. 23 ծանօթութիւն:

**) «Եկն ի ներքնի հայրապետին ի տան իւրում լնդ նորաձեռամբ (ա. Ներսիսի մէծի) երկուսան եպիսկոպոսի, արուակիցի իւր զործակիցի եւ խորհրդակիցից. թող զայլոց գաւառաց ամենայն եպիսկոպոսնեանն Փաւոտ, Զ. 5:

***) «Եւ հրամայէ (ա. Գրիգոր) բազմել ընդ ինքնան աթոռով և ոսկենկար բարձու երեսուն և վեց եպիսկոպոսաց՝ ութ և տասն յաշմէ և ութ և տասն յահեկէ». Ստ. Օրպ. Զ.:

նորա ձեռքի տակ գտնուել են հինգհարիւր եպիսկոպոս*:

ԺԹ. Պարում եպիսկոպոսութեան որակը փոխուեցաւ: Այդ աստիճանն յաճախ տրում էր վարդապետներին իրրե պարզե կամ վարձատրութիւն այս կամ այն անձնական ծառայութեան համար: Այդ մի անհերելի շեղումն է առաքելական աւանդութիւնից և բուն կոչման բնաւորութիւնից: Եթէ ժԹ. Պարու հայրապետներն այլ որ և ստգամանք չունենային իրենց վերայ, միայն այն հանդամանքը, որ նոքա անխնամ թողած են եպիսկոպոսական դասը, բաւական ծանր կշտամբանք է: Գիտակցարար թէ անդիտակցաբար, առեցնելով վտիտ և ազագուն եպիսկոպոսութիւն, կաթողիկոսները չափազանց նսեմացուցիլ են հոյտակապ աթոռի նշանակութիւնն և վարկաբեկ են արել եկեղեցու տեսչութիւնը:

Զգալով զգացին հօտի խոհուն զլուիներն այդ չարիքի հետաւնքները. 1859 Մայիսի 18-ին Կ. Պոլսի Հայոց Հոգեոր և Գերագոյն ժողովները պատրիարքի նախագահութեամբ առաջարկեցին Տ. Մատթէոս Ա. կաթողիկոսին կանոնների մի նախագիծ, որի Բ. յօդուածը պայման էր դնում, որ էջմիածնի Սիւնհոգոսն սւնենայ 12 անդամ՝ 6 Ռուսաստանից, 4 Տաճկաստանից, 1 Պարսկաստանից և 1 Մօլդովալաքիայից և Սուչավայից: Անշուշտ այդպիսի համազգային վստահելի մարմին կարող էր առելի բարձրացնել ու ազնուացնել հայրապետական աթոռի դիրքը: Եւ եթէ կաթողիկոս-

*) Մատթ. Ռւսացեցի. Վաղարշապատ 1898 ելիս 154:

ներից ոչ մէկին կարելի չեղաւ այդպիսի հաստատութիւն ստեղծել, նոքա միշտ էլ ձեռնհաս էին 12 փորձառու և հեղինակուոր հպիսկոպոսների մնայուն խորհուրդը պահպանել վեհաբանում այնպէս ինչպէս եղել է այդ հուումն, Թուի թէ նոքա առաւել սիրեցին արձակ թևերի քաղաքականութիւնը քան եպիսկոպուսց խորհրդի ներկայութիւնն և գործ ակցութիւնը:

Անկախ այս հանդամանքից՝ կաթողիկոսներն անխընամ թողնելով հպիսկոպոսութիւնը, մանրացուցին նաև եպիսկոպոսներին, որոնցից չատերը թիւրիմացութեամբ միայն հանդիսանում էին նուիրապետական բարձրագոյն աստիճանի վերայ: Եպիսկոպոս ձեռնադրել չի նշանակում մէկ անտէր ու խեղճ վարդապետի, որ այս կամ այն ճանապարհով որոշ յաջողութիւն է գտել կեանքի մէջ, աւելի բարձր ու ապահով դիրք տալու համար մատը մատանի դնել, կուրծքին պանակէ կախել և իրաւունք տալ քահանաներ ձեռնադրելու, եկեղեցիներ պատկերներ և խաչեր օծելու, և ժողովրդի հոգենոր դատաստաններն իւր նկատողութեամբ կտրելու: Եկեղեցին այդպիսի եպիսկոպոս չունի և չի ճանաչում: Եթէ կան այդպիսի եպիսկոպոսներ մեղքը նոցանը չէ, մեղքը ձեռնադրող կաթողիկոսին է, որ այդպէս է հասկացել եպիսկոպոսի կոչումն և այդպիսիներին է հանել լոյս աշխարհ:

Չենադրութեան իրաւունքը, կաթողիկոսին է պատկանում: ոչ ոք նորանից այդ իրաւունքը խւել չի կարող, այդ նորա անրունաբարելի և բնական իրաւունքն է, ոչ ոք նորան բոնադատել կարող չէ իւր

ձեռքը դնել անսարժանի վերայ: Կաթողիկոսն է մեղա-
 ւոր, որ ազգը կաթողիկոսացու չի զտնում: Կաթողի-
 կոսը կարող է իրեն անձը պարտազերծ համարել,
 մեղքը բարդելով եպիսկոպոսացուին ընտրող եկեղեցա-
 կան ուխտի և ժողովրդի վերայ: Այդ հիմնաւոր շէ:
 Եթէ ընտրողներին ուղղութիւն ցոյց տուողը, կանո-
 սական սահմանների պահպանութեան վերայ հսկողը,
 եկեղեցու ծայրագոյն առաջնորդը, որ ինքը կաթողի-
 կոսն է, թիրանայ իւր պարտականութեան մէջ և ե-
 պիսկոպոսացուի ընտրութիւնը թողնի ամբոխային
 հեղինակութեան, բնական է, որ ինքն է մեղաւոր:
 Ժողովրդին և եկեղեցական ուխտին տուած է արտօ-
 նութիւն իրենց հոգեոր առաջնորդ ընտրելու ոչ թէ
 ազատ կերպով այլ յարմարուելով այն անհրաժեշտ
 պահանջերին կամ պայմաններին, որոնք եկեղեցու մէջ
 հաստատուած են կանոններով և աւանդութիւններով
 և որոնք համապատասխան են եկեղեցու բուն կոչմա-
 նը: Եպիսկոպոս ընտրողներն ամենեին իրաւունք չու-
 նին անցնելու կանոնական սահմաններն և ուղած ա-
 մեն մի վարդապետին արժանի ճանաչել ընտրութեան:
 Խօսքը չէ որ վարդապետների մէջ արժանաւորագունի
 մասին է: Ո՞վ է որ կարող է լաւ ճանաչել վարդապե-
 տին և վատահելի վկայութիւն տալ նորա մասին: ոչ
 ոք, այլ միայն վարդապետի իրեն վարքը, զարդացու-
 մը, գործերն ու ցոյց տուած արդիւնքները: Եթէ սո-
 քա մէջ տեղ կան և համապատասխան են կանոնական
 պահանջներին, ամենալաւ վկայականներն են վարդա-
 պետի արժանաւորութեան: Եւ ընտրողներին մնում է

միայն այդ վկայականներով օժտուած լաւագունին ընտրել իրենց առաջնորդ: Ո՞վ է որ հսկում է կանոնների գործակրութեան և պահպանութեան վերայ և կարող է զիտենալ թէ որ վարդապետն է հետեւ կտնական պահանջներին, եթէ ոչ կաթողիկոսը:

Չենաղը կու իրաւունքը չէ միայն, որ պատկանում է կաթողիկոսին, այլ և ձեռնաղը եալի և ընտրողների մասին եկեղեցուն համար ու հաջիւ տալու պարտականութիւնն էլ նորան է պատկանում: Վասեպիսկոպոսի բոլոր կանոնընդդէմ և վնասակար գործերի համար կաթողիկոսը մեծ պատասխանատուութիւն ունի եկեղեցու առաջ: Հետեաբար կաթողիկոսն է, որ պարտիք ունի օր յառաջ ազատել եկեղեցու հօտն անարժան եպիսկոպոսից, եթէ ինքն արդարենախանձախնդիր է եկեղեցու սրբութեան և ամբողջութեան: Մելքիսեդէկ կաթողիկոսի վերայ ծանրացած է Նիկոլին եպիսկոպոսութիւն տալու աններելի յանցանքը, իսկ նորա յաջորդների վերայ աւելի ևս ծանրացած է նորա գործերին հանդուրժելու և նորան եկեղեցու մէջ թողնելու մեծ պատասխանատուութիւնը:

Եթէ Աթոնն արդարանալու աեղ ունենայ այնպիսիների համար, որոնք զալիս էին ձեռնաղը կու իրը թէ ժողովրդական հանրագրութեալը և պաշտօնական վկայութիւններով, (որոնք պէտք է ասել մեծ մասով յամաք ձեականութիւններ էին և կարելի էր կորպել կառկածելի ճանապարհներով) ինչ կարելի է ասել գոնէ այն եպիսկոպոսների համար, որոնց ընտրութիւնն էլ, վկայութիւնն էլ միայն կաթողիկոսին

իրեն է վերապահեալ, որն իւր որոշումների մասին ոչ
ոքի հաշիւ տալու պարտաւոր չէ բայց միայն իւր
խղճին: Շատ հեռու չէ մեզանից մի եպիսկոպոսական
ձեռնադրութիւն, որ կատարեց Տ. Մկրտիչ Ա. ձեռնա-
դրութեան պահուն Մաշտոցի պահանջած ձեականու-
թիւնների պակասը լրացնելու համար վեհը կարծես
իւր խիզճը մաքրելու մտքով յայտարարեց ժողովրդին
այն, ինչ որ ինքը կարող էր վկայել ընծայեաններից
այնպիսինների համար, որոնք ոչ հանրագրութիւն ու-
էին և ոչ որ և է վկայութիւն: Եթէ նա այդ արած չի-
նէր, գուցէ ամեննեին չնկատուէր հակասութիւնը:

Պալածէնիէի 24-րդ յօդուածը կաթողիկոսին պար-
տաւորցնում է եպիսկոպոս ձեռնադրելիս առաջնոր-
դուել եկեղեցու վաղեմի կանոններով և առանց
յայտնի հարկաւորութեան չաւելացնել անթեմ եպիս-
կոպոսների թիւը: Երբ այդ յօդուածը խմբագրում էր,
Տ. Յովհաննէս Լ. Կարբեցին արդէն հինգ տարուայ
մէջ (1832—1836) ձեռնադրել էր 21 եպիսկոպոս, ո-
րոնց միայն հինգն էին օտար սահմաններից, իսկ յի-
շեալ օրէնքի հրատարակութիւնից յետոյ, 1837—1842
թուերին, նա ձեռնադրեց 20 եպիսկոպոս, որոնցից
11 էին օտար սահմաններից: Նորա ընտրած և ձեռ-
նադրած եպիսկոպոսներից մի քանիսը Վեհապետեան-
ներ էին այսինքն կաթողիկոսի իրեն անձնական ըս-
պասաւորները. նոցա մէջ էին Յովհէփ, Մատթէոս և
Գէորգ: Էլ չենք յիշում այնպիսիններին, որոնց Տ.
Յովհաննէս ընտրում էր իւր երեսնցի և Կարբեցի
աղքականներից:

Եպիսկոպոսական ընտրութեան մէջ շատ զգոյշէր
Տ. Ներսէս Ե., որ մօտ 12 տարուայ մէջ ձեռնադրեց
12 եպիսկոպոս, որոնցից երկուսն հասան կաթողիկո-
սութեան՝ Տ. Գէորգ Դ. և Տ. Մակար Ա, և երեքը նը-
շանաւոր առաջնորդներ էին՝ Բէկնազարեան Թաղէսս
Նոր Զուղայի, Սաղունիան Սահակ Թաւրիզի և Զալա-
լեան Սարգիս Թիֆլիսի*:

Հայրապետական աթոռին նկցուկ են, անկասկած,
բոլոր եպիսկոպոսները բայց կարծես առանձին իմ
նշանակութիւն են ստանում առաւելապէս նոքա, ո-
րոնց կաթողիկոսն ինքն է ընտրում և ձեռնադրում
Մայր Աթոռի միաբանութիւնից ժթ. դաբում այդ
աղքիւրն զգալի կերպով նուազեցաւ և այդ յատկապէս
Տ. Ներսէսի օրով. հները գնացին, նորերը չզարդա-
ցան: Միաբանութեան որակը նոյնպէս փոխուե-
ցաւ: Վանք մանել սկսեցին աշխարհի մարդիկ տուանց
վանական նախակրթութեան և առանց կոչումն զգա-
լու: Միենայն ժամանակ դէպի վանք յաճախ տարած-
ուեցան դրսից աշխարհական զաղափարներ: Պէտք էր
կամ մաքառել կամ վանքը փակել: Ոչ այս եղաւ և ոչ

*) Տ. Մատթէոս Ա. ձեռնադրեց վեց տարուայ մէջ երեսուն
եպիսկոպոս, Տ. Գէորգ Դ. տասնեւից տարուայ մէջ 54, Տ. Մակար
Ա. վեց տարուայ մէջ՝ 13 և վերջապէս Տ. Մկրտիչ Ա. տասնեւինգ
տարուայ մէջ՝ 26 եպիսկոպոս: Ուրեմն վերջին յիսուն տարուայ
մէջ (1859—1908) Ս. Էջմիածնում ձեռնադրուած են 123 եպիսկո-
պոս: Կոյանից 70 Տաճկաստանից էին և 53 Ռուսաստանից: այս
վերջիններն են, որ կաթողիկոսների բացարձակ իշխանութեամբ
հասել են բարձր աստիճանի և պէտք է կազմէին Մայր Աթոռի
պարծանքը:

այն, այլ վաճառքն հետզհետէ աշխարհականացաւ։ Եթէ
թոյլ տանք, որ ժամանակի անողոքելի բերմունքն էր
այդ, պէտք էր սպասել, որ աշխարհականացած վաճառքն
ունենալ իւր նախնական հիմունքների մէջ զոնէ մի-
արանական կեանք։ Այդ էլ չկայ։ Կաթողիկոսից ըս-
կըսած մինչև վերջին միարանը, կարելի է ասել,
կեղծ վիճակի մէջ են։ Մնալով վաճական, օգտուելով
վաճական կեանքի բոլոր առաւելութիւններից, պահ-
պանելով նոյն իսկ վաճականի արտաքին տարազը,
նոքա կարծես ապրում են ոչ վաճքի համար։ Ո՞վ
չզիտէ, որ այսօր Հայոց Մայրավանքը ոչ այլ ինչ է,
եթէ ոչ մի տարածութիւն առանձին առանձին խցերի,
որոնց մէջ ապրում են ոռօճիկ ստացող մարդիկ առանց
միաբանութեան։ Ո՞ւր է միաբանական ժամերգութիւ-
նը, ուր է միաբանական սեղանը, ուր են միաբանական
ջանքերն Աթոռի ներքին պայծառութեան համար։
Ո՞ւր է կամաւոր աղքատութեան և հնազանդութեան
գաղափարը, և որ զիսաւորն է, ուր է աստուածային
բանի քարոզութիւնը կամ ըստ Աւետարանի նախ
առնելն և ապա ուսուցանելը։ Այդ ամէնն այսօր սին
հնչիններ են սնամէջ ուխտականների հս մար։

Ներկայիս թէ Ռուսաստանում և թէ զուրսը Մայր
Աթոռն ունի 35 հոլիսկոպոս։ մի քանիսն արդէն ծե-
րացած են։ Ի՞նչ է այդ թիւն այն կարիքի հանդէպ,
որ տիրապէս ունի եկեղեցին։ Բոլոր առաջնորդական
աթոռների թիւն է 75։ Թէև Տաճկաստանի համար ա-
ռաւելութեամբ է հաշուած, բայց Ռուսաւստանին էլ
շատ պակաս է։ Ըստ Պալաժէնիէի՝ Ռուսաստանի Հա-

յոց հոգեսոր բարձրադոյն ատենի այն է Ս. էջմիածնի Սինօղի մէջ լինելու է չորս հպիսկոպոսական աթոռ: Եթէ հայրապետանոցի նախնի 12 եպիսկոպոսական աթոռներն էլ աւելացնենք, կըտեսնուի, որ 91 գործի ընդունակ հպիսկոպոս պէտք է ունենայ եկեղեցին, որպէս զի նորս պէտքերը կանոնաւորապէս լրացուին: Եթէ կաթողիկոսները փոյթ տարած լինէին այդ կարեքին, մեծապէս դիւրացած կըլինէր եկեղեցու կառավարութեան գործը, բարեկարգ և բնութիւնուոր:

Այլ պատճառների հետ միասին թուի թէ հպիսկոպոսական գաոի անկեալ գրութիւնն ևս ազգել է, որ կեդրոնի գործունէութեան մէջ շատ աչքի է ընկնում աւանդութեան խախտումն, օրինականութեան շփոթումն, ինքնիշխանական միտումներ, կամաւոր կամ աշկամայ ձեականութիւնների յաճախումն, չարիքներ, որոնք կըծեցին, մաշեցին հայրապետական աթոռի պատռանդանը մի դար շարունակ: Այդ պատճառով և եկեղեցու զուտ հոգեսոր կացութիւնը մինչև օրս բարւորումն չգտաւ, Ապացոյց՝ Ս. էջմիածնի Մայր եկեղեցու և բոլոր միւս եկեղեցիների անշուք և ողորմելի պատկերը դրսից և ներսից, մանաւանդ զիւզերում, վանքերի կիսակործան և ամայի զրութիւնը, զարդերի անօթների և զգեստների բազմատարագ և հնուաի տեսքը, երգեցողութեան և պաշտամունքների անխնամ վիճակը, և իբրև պստի այս ամենի՝ Հայոց եկեղեցական ուխտի անկեալ և անարգ կացութիւնը: Կարծես մի դար շարունակ Աթոռի նպատակը լինէր ընտելացնել իւր հօտին տեսնելու միշտ տգէտ կամ կոչումից

զուրկ քահանաներ ու վարդապետներ, որոնք մեծ մաս սով իրենց օրինակելի թերութիւնների համար իրաշխոյս էին ստանում Աթոռից՝ խաչեր, փիլոններ, կամելականներ, աւագութիւն, գաւաղանի իշխանութիւն և եպիսկոպոսութիւն այն առատութեամբ, ինչ առատութեամբ որ նորա շահաւէտ էին վեհաբանին:

Այլևս չխօսինք կաթողիկոսների պէս պէս իրաւունքների և պարտականութիւնների վերայ, որոնք ներկայիս հրապարակախօսութիւնն աւելի ևս ընդարձակելու փորձեր է անում: Շատանանք միայն այնքանով, ինչ որ նոցա զուտ հոգեոր պաշտօնին է վերաբերում: Եթէ ԺԹ. դարում հայրապետական աթոռի գործունէութեան մէջ հետեղականութիւն և յաջորդականութիւն պահուած լինէր այնպէս, ինչպէս կանոններն, աւանդութիւններն և պետական օրէնքն են պահանջում, այսօր շատ հոգեոր աղետներ պակաս կը լինէին: Բաւական է մատրերել միայն մէկը, հօտի կրօնական դաստիարակութիւնը: Ամեն աել լուած է աստուածային բանի ուսումն և գիտութիւնը, մի բան, որ անհրաժեշտ է ամեն մի հաւատացեալի: Ոչ քարոզ կայ, ոչ խրատ և վարդապետութիւն, ժողովուրդն ամիսներով, գուցէ և տարիներով: Ա. Աւետարանի բացարութիւն չէ լսում, որ նորա հոգեոր սնունդն է, և եթէ լսէ, չի հասկանում: Դպրոցներում կրօնի ուսումը գոյութիւն ունի լոկ անուանական կամ ձեռական կերպով, աւելի ևս անուանական է և այն հսկողութիւնը, որ այդ կրթութեանն և ուսմանն է վերբերում: Այդ խոկ լուրջ պատճառներից հասունացել և

և հասունանում է մի սերունդ, որ միայն ժխտել կիւտէ կրօնական ուսման և պարտականութիւնների կարեռութիւնը: Թէ որքան մեծ է այդ աղէտը, նկարագրելն իսկ անհնարին է: Ինչպէս որ մարդուս մարմինն, իւր բնական սնունդը չունենալով, զրկում է և բնական կարողութիւններից, այնպէս էլ մարդուս հոգին, զուրկ մնալով հոգեոր սնունդից և չընդունելով իւր մէջ աստուածային բանի կազդուրիչ զօրութիւնը, կըմնայ միշտ հիւանդոտ, և մատնուած է անվերջ տառապանքների նոյն իսկ այս կեանքում: Կենսական աղէտների կարգում ամենից սարսափելին է այդ աղէտը:

Հայրապետւկան աթոռի պատուանդանն ամուր և անդրդուելի է, երբ ամուր և անդրդուելի է հաւատն հօտի մէջ: Արդ եթէ հօտի, մանաւանդ մատաղ սերունդի, կրօնական գաստիարակութեան և հոգեոր կրթութեան զործը բաւականաչափ խնամքի առարկայ չէ եղել կաթողիկոսների համար, չէ որ այդպիսով ինքնին խախտել և զրդուեցուցել են նոքա նաև աթոռի հիմքերը: Ահա թէ ուր է թագնուած բուն ցաւը:

Տ. Գէորգ Դ. բաւական յաջող փորձեր արաւ Աթոռի հոգեոր և բարոյական նշանակութիւնը որոշ աստիճան բարձրացնելու. Նա իւր օրով խրախոյս և աջակցութիւն չլայելց, բայց անխոնչ աշխատութեամբ հարթեց շատ կոշտ ու խոպան ճանապարհներ: Նորայաջորդները օժտուած նորանից ոչ պակաս հմտութիւններով և շրջապատուած աւելի մեծ յարմարու-

թիւններով, գիտակցաբար թէ անգիտակցաբար ստեղծեցին մի դրութիւն, որ Աթոռի արդի անմխիթար կացութեան յայտաբարն է, անշքութիւն և աղքատութիւն:

Կարեկից սրտեր և խոհուն զլուխներ, ներքին բարենորոգման կամ ընդհանուր եկեղեցական վերանորոգութեան խորհուրդներով տոգորուած, պէսպէս ծրագրներ են տուաջարկում և գրեթէ անհնարինն են պահանջում: Այս մեր եկեղեցական պաշտամունքները ներքուստ և վարչական կազմակերպութիւնն արտաքուստ շատ կարօտ են բարեփոխութեան այն էլ անհշուշ ժողովրդի հոգեոր կեանքի բարգաւաճման օգտին: Սակայն ակներք է այն, որ ոչ մի բարի և ցանկալի խորհուրդ չպիտի հասնի իւր կատարածին տուանց բարեփոխելու Մայր Աթոռի կացութիւնը, որ ըստ հոգեորին մանաւանդ շատ անմխիթար է: Եթէ կայ ներկայիս մի ստիպողական և հնարաւոր բարեփոխելի բան, այդ Մայր Աթոռի բոլոր մասերի ներքին բարեկարգութիւնն ու կազմակերպութիւնն է, մի գործ, որ որքան շուտ և յաջող ընթացք գտնի, այնքան աւելի շուտ կը վերականգնի հօտի և հովուի ըլունական և շինարար մտերմութիւնն, և եկեղեցին թօթափելով իրենից այն, ինչ որ եկամուտ է և ոչ հարազար, կ'ընդգրկէ իւր մայրական կոչումը տիրապէս սնուցանելու և գաստիարակելու իրեն խնամքին յանձնուած հօտը:

Աւելին պահանջել առ այժմս շատ վաղաժամ է, գուցէ և վտանգաւոր:

Եթէ Մայր Աթոռը չի ուզում յանձնուել անվերջ
պատահականութեան և անսսուզութեան քայքայիչ
ազգեցութիւններին, որոնք կարծես սկսել են իշ-
խել նորա վերայ, նա պարտաւոր է թօթափել
հեռացնել իրենից այնպիսի հոգսեր, որոնք ար-
գելք են հանդիսանում կոչման բարձրութեան վերայ
լինելու։ Առ այդ՝ անհրաժեշտ է նախ և յառաջ Աթոռի
միաբանութեան շարքերը զտել և կազդուրել կրօնա-
կան մաքուր գիտակցութեամբ զօրացած տարրերով,
որոնք ընդունակ լինէին կրել ոչ միայն ամեն զոհա-
բերութիւն, այլ և հոգեւոր տոկուն աշխատանք։ Փորձել
են զօրացնել և ճոխացնել այնտեղ տնտեսութիւն, ա-
պահովել նիւթական հարստութեան աղբիւրներ, կանգ-
նել այնտեղ ճարտարապետական և այլ ճենարկու-
թիւններ։ Սակայն այդ ամենն ամեննեին կարող չեն
բարձրացնել և ապահովել Աթոռի վիճակը, եթէ նորա
յաւերժական պարծանքները չկինին բարեկարգ ճեմա-
րանը, գործունեայ տպարանը, կրօնական գիտակցու-
թիւն տարածող Արարատը, Մայր Եկեղեցու ոգեշունչ
պաշտամունքները, տառապեալ ժողովրդին հոգեւոր
միսիթարութիւն մատակարարող աստուածախոս քա-
րոզիչները, ազգի ոգին ու միաքը լուսաւորող և
բարձրացնօղ հոգեւոր գիտութեան մշակներն և այլ մը-
տաւոր կեանքին զարկ տուօղ հաստատութիւնները։

Զկան դոքտ, չնչին և անզօր են նաև նորա նիւթա-
կան ճոխութիւնները, որոնք միայն կշտամբել կարող
են Աթոռի աշխարհասիրութիւնը։

Ա.

1842 Մարտի 26-ին վախճանեցաւ Տ. Յովհանն-նէս Բ. Կարբեցի. նորա յաջորդը, Տ. Ներսէս Ե. Աշ-տարակեցին, ընտրուեցաւ 1843 Ապրիլի 17-ին և օծ-ուեցաւ 1846 Յունիսի 9-ին: Զորս տարի և երկու ա-միս ու կէս Հայոց հայրապետական աթոռը թափուր մնալուց յիտոյ վերջապէս ունեցաւ իւր օրինական յաջորդը:

Տ. Ներսէս անդրանիկն էր այն կաթողիկոսների շարքում, որոնք հայրապետական աթոռին հասան 1836 թուականի Պալաժէնիկին համհմատ: Իւր ընտ-րութեան և հաստատութեան պահուն նա առաջնորդ էր Բիսարբիոյ և Նոր Նախիջևանու թեմի, որի մէջ էին և Ռուսաստանի մայրաքաղաքները, Մոսկով և Ս. Պետերբուրգ: Հաստատութեան հրովարտակի հրա-տարակուելուց յառաջ, հետեւելովներքին գործերի նա-խարարի հրաւէրին, Տ. Ներսէս ուղևորուեցաւ Քիշնե-ւից Ս. Պետերբուրգ, ուր ժամանեց 1843 Յուլիսի 6-ին: Դեռ երկար ճանապարհի յոդնածութիւնից չէր հանգստացել, որ նա յանկարծ հիւանդացաւ Օդոսառոսի Յ-ին և մինչև Սեպտեմբերի 20 «անակնկալ ի կենաց» ինչպէս զրում է ինքը, «անզգայ ընկած էր անկող-

նում շատ ծանր վիճակի մէջ: Ծերունի հովուապետն
այն ժամանակ եօթանասուներեքին մօտ հասակ ու-
նէր: Մայրաքաղաքի հմուտ բժիշկների բոլոր միջոց-
ներն սպառեցան, բարեպաշտ ասպնջական լազարեան-
ների խնամքն և ուշադրութիւնն յուսահատութեան
փոխուեցաւ: Յուսահատ էին և վեհին շրջապատող մը-
տերիմներն ու սպասաւորները: Վերջապէս հիւանդին
մահուան ճանկերից կորպել կարողացաւ բժիշկ Պաշ-
կով, որ պառաւ կոմսունի Վիսկովատովայի հետ միա-
սին մագնիսականութեան միջոցով ուշքի և ուժի բե-
րեց անզգայութեան մէջ թալկացած ծերունուն: Սեպ-
տեմբերի 20-ին հազիւ նշմարելի եղան ապաքինու-
թեան յոյսերը: Այդ իսկ հիւանդութիւնն և պատճառ
եղաւ կաթողիկոսի երկար մնալուն հիւսիսում:

Մինչ նա այդպիսի վիճակի մէջ էր, տեղի ունե-
ցան զէպքեր, որոնք առանց նշանակութեան անցնել
չէին կարող:

Մի կողմից կառավարութիւնն իւր կարգադրու-
թիւններն արաւ այն է՝ Օգոստոսի 13-ին ուղարկուե-
ցաւ կաթողիկոսին յանձնելու հաստատութեան հրովար-
տակն և յայտնելու կայսեր ժամադրութիւնն Օգոստո-
սի 15-ին ունկնդրութեան ներկայանալու: Օգոստոսի
17-ին ուղարկուեցաւ նշանը: Յայտնի բան է, որ վեհին ինքն
այս ամենից ոչինչ չէր իմանում:

Միւս կողմից կաթողիկոսի ծանր հիւանդութեան
լուրը տարածուեցաւ ամէն տեղ, հասաւ և Ս. Էջմիա-
ծին, ուր մտքերի խլրտումն յառաջ բերեց միաբանու-

թեան մէջ այն չափով, թէ կաթողիկոսի մօտալուտ
վախճանն անխուսափելի է:

Երբ 1843 թուի աշնանը Տ. Ներսէս աչքը բաց ա-
րաւ ծանր հիւանդութիւնից և սկսեց հասկանալ իւր
զրութիւնն, արդէն պաշտօնական լուծը զրուած էր
իւր պարանոցին: Հարկ էր կամայ ակամայ համակեր-
պիլ զրութեանը:

Տեղեկութիւն կայ, որ գեռ մինչև 1844 թ. Զատ-
կին կաթողիկոսն անկողնի մէջ է եղել, թէն ոչ ան-
ընդհատ՝ իւր վիճակի և անցած դարձածի վերայ նա-
ինքը տեղեկութիւններ է հաղորդում հեռաւորներին
իւր թղթերով: 1843 Նոյեմբերի 26-ին թ. 36 զրու-
թեան մէջ, որ ուղղել է «պատուելի միաբանութեան
սուրբ լուսաւորչերամ ազգի Հայոց յԵրեան քաղաքի և
ի շրջակայս նորին հոգեորականաց և մարմնաւորա-
կանաց², կաթողիկոսը պատմում է, որ հայրապետու-
թիւնն իւր վերայ զրուել է իւր կամքին ու ցանկու-
թեանն հակառակ: «Ես բոլորովին հեռու էի պահում
իմ մաքից, զրում է, կաթողիկոսական և պատրիարքա-
կան կոչումների ցանկութիւնը: Այդ կոչմանն ինձ հրա-
ւիրեցին, ասում է, նախ 1809 թուին Օսմանեան դը-
րան զերապատիւ ճոխ իշխանները, և ապա 1812
թուին հանգուցեալ սրբազն Եփրեմ կաթողիկոսը:
Նախապատիւ համարելով, ես ջերմ սրտով ցանկանում
էի միշտ, որ այս եպիսկոպոսական ստանձնածու կո»

1) Պատմ, Ն.-Զուղ. Թաղէսս եպիսկոպոսի կենսագր. 8:

2) Դիւանական գործ 1843 ամի. — տ, նաև Ցուց. Ժողով. Դա-
դիւան Խաչ, Վարդապետի, Բ. 11:

չումը պարտուպատշաճ ծառայութեամբ եկեղեցուն և
ազգին կարողանամ անդատապարտ կացուցանել: Այս-
պիսի հաստատ որոշմամբ կայի և մնում էի իս վի-
ճակային պաշտօնիս մէջ, երբ ստացայ նորին բարձր
գերազանցութեան ներքին գործերի մինիւստրի զբու-
թիւնը, որով նա նորին կայսերական մեծութեան
հրամանով հրաւիրում էր ինձ շտապել հասնել Ս. Պե-
տերըուրգ: Տէրութեան զանձարանից ճանապարհա-
ծախքիրի համար էլ նշանակուած էր մի զումար*: Այդ
ժամանակ երկար մտածելուց յետոյ տւելի լաւ համա-
րեցի չխնայել ճանապարհի նեղութիւնը և զալ այս-
տեղ, Ս. Պետերըուրգ, և խորհուրդ անելով նորին ը.
գերազանցութեան հետ, հասկանալ՝ եթէ արդարե մի
որեէ ազգային շահ յատկապէս կըպահանջէ, որ հս
պատրիարքական և կաթողիկոսական կոչումն ըն-
դունեմ, իմ անձս նույիրելով Հայոց ազգի հասարա-
կութեանը, այն ժամանակ յանձն առնիմ, իսկ եթէ ոչ,
մեծ շնորհակալութեամբ ինձ հրաժարուած համարեն
այն կոչումներից: Այդպիսի մտազրութեամբ և եկայ
հասայ այս կայսերական մայրաքաղաքն Յունիսի 6-ին:

Ապա նոյն գրութեան մէջ պատմելով իւր հիւան-
դութիւնը, հրովարտակի և շքանշանի ստացումը, և
այլն, ինչպէս վերն յիշուեցաւ, վեհը զրում է և այս.
«Իմ անձիս տկարութեան պատճառով, տսում է, զեռ
մինչի ցարդ (26 Նոյիմ. 1843) չեմ ներկայացել նորին
կայսերական մեծութեան և յոյս ունիմ թէ Աստուծոյ
«ամենաբաւական շնորհօքն» կարողանամ ներկայանալ

*) Ցուց. Ժող. Դադ. Բ. 11. նշանակուած է 1500 սուրբի:

այս ամսի լրումից յառաջ, և անձնական կարողութիւններս կազդուրելուց յետոյ ճանապարհ ենիմ ինչպէս որ Տիրոջ կամքն յաջողէ»:

Ծերունի հովուապետին վերջապէս յաջողեցաւ արժանանալ մեծահոգի Նիկողայոս Ա. կայսեր ունկընդութեանը նոյն նոյեմբերի 28-ին: Այդ մասին ինքը վեհը յատուկ կոնդակով տեղեկութիւն հարորդեց Ա. էջմիածնի Սինօղին՝ կայսերական ընտանիքի անդամներին և Դիկտեմբերի 4-ին և 5-ին ներկայանալուց յետոյ: Թողնինք, որ դարձեալ վեհն ինքը պատմէ մեզ այն տպաւորութիւնները, որ նորա վերայ թողել է կայսերական ասածին ընդունելութիւնը ձմերային պալատում:

«Չորս ամսուայ մահագուշակ հիւանդութիւնիցս յետոյ, զրում է կաթողիկոսը, անցեալ նոյեմբերի 28-ին Կիւրակի օրը ցերեկուայ 12 ժամին և արժանի եղայ ներկայանալու նորին կայսերական մեծութեանն և վայելելու նորա աստուածանման մարզասիրութեան մեծ շնորհները, որոնց մասին համառօտ յիշատակելս համագական միթթարութեան առիթ և մեծ ուրախութեան արդիւնաւորիչ եմ համարում»*: Ապա նկարագրում է թէ ինչպէս է մտել պալատ և հրաւիրուել կայսեր ընդունաբանը: Երբ Լազարեանց Խաչատուր աղայի ուղիկցութեամբ հասնում է բարձրաբերձ պաշլատի ներքնայարկի սրահը, որտեղ սկսում են գէպի քառայարկ վերնատունները տանող սանդուղքների աստիճանները, կաթողիկոսին սռաջարկում են բազ-

*) Ցուց. Ժող. Դադեան Խ. վ. Բ. 56.

մելու նախապատրաստած պատգարակի վերայ, որպէս-
զի չորս մարդիկ, որոնք այնտեղ կանգնած էին, նո-
րան բարձրացնեն դէպի վերնայրակերը. կաթողիկոսն
հրաժարւում է բազմել այդ պատգարակին: Ապա եր-
կու մարդ իրենց ձեռքերի վերայ հանում են կաթողի-
կոսին մինչև չորրորդ յարկը. այդտեղ դիմաւորում է
վեհին մի աստիճանաւոր, որն հրաւիրում է նորան ա-
ռաջին սենեակն. այստեղ 6-7 րոպէ հանգիստ առնե-
լուց յետոյ հրաւիրում է երկրորդ սենեակը, որտե-
ղից մի գուռ բացւում է դէպի կայսեր ընդունաբանը,
կաթողիկոսին խնդրում են նստել այնտեղ մինչև որ
կայսրը եկեղեցուց գայ. մի փոքր յետոյ մեծ պաշտօ-
նատարներից մէկը բաց է անում կայսեր տասնձնա-
կան սենեակի («քաղինեթի») դուռը և տում է թէ
կայսրը ձեզ խնդրում է: «Երբ որ ես յառաջացայ և
տեսայ, որ կայսրն ինքը կանգնած է դուն մօտ, զը-
րում է Տ. Ներսէս, ապա խաչակնքեցի նորան և
բարձր ձայնով ոռւսիրէն (տրտաստնելով) Յանուն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, յառաջ անցայ, բանե-
ցի նորա ձեռքից, և համբուրեցինք ևս նորա և նա
իմ ձեռքս. և իսկոյն հրամայեց նստել աթոռի վերայ,
ևս չյօժմացայ նստելու, բայց նա թեիցս բռնից և
նստեցուց աթոռին, և ինքը մի կամ երկու րոպէի
չափ կանգնած մնալուց յետոյ նստաւ իմ ձախ կողմից,
և ապա ոկտեղ հեղաշունչ հարցարանութեամբ լսել
նախ իմ հիւանդութեան և իմ անձնական վիճակի որ-
պիսութեան մասին այն զօրեղ ցաւակրութիւններիցս
յետոյ, ապա էջմիածնի աթոռի և ընդհանուր Հայոց

ազգի որպիսութեան մասին։ Այդ լճանանուը հարցումներից յիշայ կայսրը խօսակցութեան մէջ յատուկ ուշադրութիւն է շնորհել Հայոց հոգեորականութեան վիճակը բարւոքելու հարցին «յաղագս ամբառնալոյ զնոգեորականոն Հայոց ի վայելչական դրութիւն գիտնական աղքաշան հոգեորականութեանց» և երկրորդ՝ հոգմէական քարոզիչների մեր ազգին և եկեղեցուն հասուցած ֆլամները խափանելու մասին։ Ապա կայսրը խոստանում է աջակցել և դիւրութիւններ տալ կաթողիկոսին իւր ձեռնարկութիւնների մէջ։ Թէպէտասելիքներ շատ են եղել կաթողիկոսի մտքում, սակայն քաղաքավարութեան կարգը չխանգարելու համար շտապում է նու աթոռից ելնել. այդ ժամանակ կայսրն ինքն էլ աթոռից ելնելով, ոտքի վերայ դարձեալ շարունակում է յուսաղրտկան խօսքերը, և երբ պէտք է բաժանուէին, կաթողիկոսը նորա ձեռքը բռնեց և ուզեց համբուրել, բայց կայսրը չթողեց. այդ ժամանակ, ասում է, «ես զուարթ ձայնարկութեամբ տասցի. կակ մօժնայ միէ բազմաննիկեայ (ՏՕԾ) բօժիյի նէ բացէլվատ բուկու. Զիմլրդ է ինձ օծելոյն Աստուծոյ չհամբուրել զծեռն նորա. և խոնարհեցուցեալ զգլուին իմ, ելի յառանձնաբարանէ անտի*.

Քանիոր Տ. Ներսէս ոչինչ յիշատակութիւնն արած չէ, ակներե է, որ այդ առաջին տհսակցութիւնը կայսեր հետ տեղի է ունեցել առանց վկաների և առանց թարգմանի; Ինքը ծերունի հովուապեան արդէն 40 տարուց աւելի ժամանակ, մանաւանդ 1814 թուից

*) Տ. նոյն։

սկսած, յաճախ առիթ ունենալով տեսնուելու և գործելու ոռւսազգի և հայազգի պետական անձինքների, զօրքերի ու զօրավարների հետ, կանուխ սկսել էր ինքնուսաբար ընտելանալ ոռւսերէն լեզուին. ընդունակ ու սրամիտ, չափազանց աշխոյժ ու կրակոտ Աշտարակեցին էր կարող արհամարհել այն լեզուն, որն արգէն Հայոց եկեղեցու հօտի համար կենսական պահանջ էր գառել ոչ միայն Վրաստանում և Հարաւային Ռուսաստանում, այլ մինչեւ անգամ 1828 թուից յետոյ նաև Արարատեան աշխարհում. ուստի նա վարժուել էր արգէն առանց թարգմանի խօսելու ոռւսների հետ: Բաւական է, որ նա իրեն վերայ այնքան վստահ էր, որ մինչեւ անգամ պէտք չհամարեց վեհանձն Նիկողայոս Ա. կայսեր հետ տեսնուելիս թարգմանի օգնութեան զիմել: Այդ, իհարկէ, շատ լաւ տպաւորութիւն պէտք է գործէր ինչպէս առհասարակ պետութեան բոլոր մեծամեծների նմանութէս և աւելի նոյն երկրի վեհապետի վերայ: Ապագայում Տ. Ներսէս նոյն կերպով շարունակում և պահպանում էր յարաբերութիւն կովկասեան փոխարքայի, նորա ընտանիքի և տէրութեան այլ և այլ պաշտօնեաների հետ*:

S. Ներսէս, շատ գոհ էր այդ առաջին ընդունելութիւնից: Նոյն կոնդակի մէջ նա նկարագրում է նախ այն տպաւորութիւնները, որ կայսրն ունեցել է տհամակցութեան պահուն: Ներքին գործերի նախարարին կայսրն իսկոյն հաղորդել է, զորօրինակ, թէ Եր-

*) Ерицован А. Патриархъ Нерсесъ V. и Воронцовы, 1898 Тифлисъ, 11.

կար ժամանակ է, որ այսպիսի ախորժ ունկնդրութիւն նորեկների ունեցած չեմ ինչպէս այժմ պատրիարքին ընդունելիս. նոյնը հաղորդել է նա և միւս նախարարներին և կայսերունուն: Երկրորդ՝ որ ծերունի հայլապետի համար աւելի ևս միխթարականն և խրախուսիչն է, կայսրը ասած է եղել թէ «աւանդ, զի իզուր կորուսեալ եմք զամս 20 վնասուց մերում կառավարութեանց այնոցիկ կողմանց և աթոռոյ էջմիածնի» ակնարկել ուզելով այն, որ 1828 թուին կոմս Պասկեւչիչ ատելութեան երեսից Տ. Ներսէս Ե. ճեռու քըշուցաւ կովկասեան աշխարհներից և 1830-ին նշանակուեցաւ Բեսարաբիոյ թեմի առաջնորդ: Ինքը կաթողիկոսն այսպէս է հասկացել անշուշտ կայսեր այն խօսքերն, երբ գրում է նոյն կոնդակի մէջ հետեւելը. «Այս, այն, սոքա եղան իմ սրտիս իսկական սփոփանք ոչ այն պատճառով, որ կայսրն ինքն եղաւ իմ ապարդիւն անձին գովարան, այլ որ իմ վնասակարութեանս ամբաստանողն այժմ ամօթապարտ մնաց»: Կայսեր խօսքերը Տ. Ներսէս Ե. նկոտեց իրեկ արգարութեան վերջնական յաղթանակ իւր թշնամիների դէմ, և աւելի ևս հաճոյական էին իրեն մանաւանդ այն պատճառով, որ կոմս Պասկեւչը դեռ մինչեւ այդ ատրին էլ ամեն կերպ աշխատում էր, որ կայսրը իւր հակառակորդին, Ներսէսին, չհաստատէ Հայոց հայրապետական աթոռի վերայ*:

Վեհի այս ծանուցողական կոնդակից զատ, որ գրուեցաւ Սինողին, տեղապահ Բարսեղ արքեպիսկո-

*) Нерс. V и Воронцовы, 8.

պոսն էլ մի ընդարձակ նամակ ստացաւ Ա. Պետեր-
բուրգի Եփրեմ վարդապետից, որը գրուած է 1843
Դեկտեմբերի 30-ին, այդանուն նամակագիրն հաղորդում
է, որ վեհը Նոյեմբերի 28-ին և Դեկտեմբերի 4-ին և
5-ին ներկայացել է Կայսեր, կայսերուհուն և միծ իշ-
խան Միխայել Պաւլովչին. նա յիշում է, որ կաթողի-
կոսն արգեն հազարդել է Ալինօղին և զրածն է «իս-
կութիւն պատմութեանցն». ինքն իւր կողմից հարկ է
համարում աւելացնել տեղապահի զիտութեան համար
այն թէ ինչ խնդիրներ է արել կայսրից պալատում
Տ. Ներսէս Ե. «վեհափառ տէրութիւնս մեր, զրում է
Եփրեմ վարդապետը, անդանօր խնդրեալ էր ի կայսե-
րէն յատկապէս նորոգել զշնորհ իւր առ մեր
ազգականութիւնս (կարգա ազգ.) խնդրեալ էր
և տալ ինքեան զրումն զօրութիւն առ
կարողանալոյ ներգործել ըստ տեղւոյն ի հո-
գեռականութիւնս մեր զիւր օգտակար
համարեալ կամա. խնդրեալ էր և տմենամեծ
գումար գրամոց յարքունի զանձուց առ
կանգնելոյ յաթուգ զգերանչ սակ սկինա-
րիայ»*: Այս հն Եփրեմ վարդապետի տսիլով Տ.
Ներսէս Ե. կաթողիկոսի խնդրերը կայսրից: Վերէ
յիշուած կանգակից մակարերելու է, որ նորա այդ
խնդրերն ընդհանրապէս հաճութեամբ լոել է կայսրն
և խոստացել է իր աջակցութիւնը:

*) Սեղմակեան Ա. Ե. Յովհ. Էպ, Շահի, Կհնսագը, 150.

Բ.

Դեռ հիւանդ էր կաթողիկոսն, երբ Վրաստանի գլխաւոր կառավարիչն իւր զրութեամբ 1843 Օգոստոսի 31-ին թ. 2560 յայտնեց Ս. Էջմիածնի Սինօդին Տ. Ներսէսի հաստատութեան մասին, ուզարկելով նաև բարձրագոյն հրովարտակի պատճէնը: Սինօդը Սիպումբերի 10-ին կարգադրեց նոյն պատճէնն ուղարկել Ռուսաստանի Հայոց բոլոր թեմական ատեաններին և հրատարակել նոր կաթողիկոսի հաստատութիւնը: Բհսարարիոյ և Ն. Նախիջևանի եկեղեցիներում, որոնք արդէն յիշում էին Ներսէսի անունն իրարեն իրենց առաջնորդի, Սինօդի հրամանագրութիւնն ստանալուց յետոյ սկսեցին յիշատակել իրեն ամենայն Հայոց կաթողիկոսի: Երբ այդ լուրը Ս. Էջմիածին հասաւ, որտեղ տակաւին չէին յիշատակում նորընտիր հայրապետի անունը, և ոչ իսկ Կովկասի Հայոց միւս եկեղեցիներում, Սինօդի պրօկուրորը Հոկտեմբերի 29-ին սուաջաղը ում է Սինօդին տնօրինել, որ Տ. Ներսէս Ե. կաթողիկոսի անունն յիշատակուի Կովկասիան Հայոց բոլոր եկեղեցիներում ևս: Պալամէնիչն, ինչպէս յայտնի է, այն ժամանակ արդէն գործադրութեան մէջ էր, նորա 21-րդ յօդուածն տսում է, որ Հայոց եկեղեցիներում աստուածային պաշտամունքների ժամանակ կաթողիկոսի անունը յիշատակում է անմիջապէս կայսեր և նորա տան անդամների յիշատակութիւնից յետոյ: Այսքան է Պալամէնիչի զբաժանունը կաթողիկոսի անուան յիշատակութեան մա-

սին. իսկ թէ Բըր և մեմ կարգադրութեամբ պէտք է սկսել այդ յիշառակութիւնն, այդ մասին նորա մէջ ոչ մի սահման և հրահանգ չկայ: Աթոսի տեղապահ Քարսեղ արքեպիսկոպոսն և Սինօղի անդամներն իրքի վանական գասի հոգեորականներ կարող էին առաջնորդուել այն աւանդութիւններով՝ որոնք մինչ ցայն պահուած էին Ս. Էջմիածնում և գործ էին գրւում: Արդ՝ այդ աւանդութիւններին նայելով, նոքա պարզապէս համոզուած էին և գիտէին, որ նորընտիր կաթողիկոսը կարող է՛ց ստանձնել իւր իշխանութիւնն և կրել ու գործ դնել իրեն յատուկ պատիւներն ու արտօնութիւններն այն ժամանակ միայն, երբ արդէն արժանացել էր նա ձևնագրութեանն և ո. օծմանը:

Այլ կերպ էր պատճառաբանում իւր առաջարկութիւնը Սինօղի պրօկուրօրը: Աչքի առաջ ունենալով, որ նախ կին արքեպիսկոպոս Ներսէսն արդէն ճանաչւում է պատրիարք կաթողիկոս, որի անունն արտասահմանում է Կովկասի սահմաններից դուրս Ռուսաստանի Հայոց եկեղեցիներում և, կարծելով, որ կարեոր է անշուշտ յիշառակել նորա անունն և Կովկասի Հայոց եկեղեցիներում առանց գժուարանալու այն բանում, թէ եկեղեցական ծէսն այն է օծութիւնը տակաւին կատարուած չէ, նա առաջարկում էր Սինօղին անել պատշաճաւոր տնօրինութիւն*: Պրօկուրօրի այս թուղթն յառաջ բերեց Սինօղի անդամների մէջ կարծիքների շփոթութիւն և նոքա չկարողացան համաձայնութեան գալ:

*) Սեպակեանի, Յովհ. եպ. Շահլ. 159.

Այդ և առիթ տուեց պրօկուրօրին Նոյեմբերի 8-ին
երկրորդել իւր առաջաղութիւնն և փութացնել խնդրի
լուծումը: Նոյեմբերի 12-ին Սինօղն օրագրութիւն
կազմեց և իւր պատճառաբանութիւնները մէջ բերե-
լով, մերժեց պրօկուրօրի առաջարկութիւնը: Պատճա-
ռաբանութիւնները հետեւալներն են.

ա. «Ամենայն Հայոց կաթողիկոսն, Հայաստանի այց
եկեղեցու ծէսերին համաձայն, տէրութեան հաստա-
տութիւնն ընդունելուց յետոյ և իր օծումից յառաջ
եկեղեցում պատրիարքական աթոռին չի բազմում,
այլ կանգնում է պատուաւոր ակոյն տեղում էջ-
միածնի տաճարի մէջ: Կաթողիկոսական օծումն ըն-
դունելուց յետոյ նոյն պատարագին նա յիշատակում է
իւր նախորդների անուններն, իսկ յետոյ սեղանի դը-
պիրներն յիշատակում են նորոգ օծեալի անունը: Այս-
պէս տասներկու արքեպիսկոպոսների ձեռքով Ա. Հո-
գու իսկական շնորհնելին արժանանալուց յետոյ հրե-
կոյեան ժամերգութեան ժամանակ աթոռի արքեպիս-
կոպոսներն և եպիսկոպոսները նորին վեհափառու-
թեան մօտ գտուի, հանդիսով տանում են նորան էջ-
միածնի տաճարը, որտեղ նորին վեհափառութիւնը
Միաժին Որդու Իջման սուրբ սեղանի առաջ երկրպա-
ղութիւն մատուցանելուց յետոյ Սինօղի պատուառ-
ը ակոյն անդամների կողմից հրաւիրում է ընդունել
իւր տեղը կաթողիկոսական աթոռի վերայ: Այս սահ-
մանադրութեամբ ընդունեցին այս կարգն, առում են,
և նախնի բարեյիշատակ կաթողիկոսները, նաև Եփ-
րեմի ու Յովհաննէսը մեր ժամանակներում, ինչպէս

քաջայայտ է բարձրագոյն կամօք ամենայն Հայոց կաթողիկոսութեան համար հաստատուած՝ բարձր սրբազն արքեպիսկոպոս Ներսէսին»:

Բ. Սինօդի անդամներն համոզուած են, որ պրօկուրօրն էլ յասաջնոյն կարծիքին էր, ուս 1843 Յուլիսի 7-ին նա Թիֆլիսից գրում է տեղապահին և զգուշացնում է նորան, որ չլինի թէ կաթողիկոսի անուան յիշատակութիւնն օծումից յառաջ կատարուի, որպէս զի օտար սահմանի Հայերին առիթ չտրուի արտնջաւու, թէ տակաւին չօծուած յիշատակում են կաթողիկոսին: Պրօկուրօրի հակասական կարծիքներից թիւրիմացութեան մէջ են անդամներն և չեն կարող հասկանալ պատճառը, նոքա ուզում են իմանալ մի գուցէ պրօկուրօրը ծայրագոյն իշխանութիւնից մի նոր հրաման է ստացել:

Գ. Սինօդը պէտք է համարում աչքի առաջ ունենալ և այն թէ ինչ ապաւորութիւն կը գործէ վաղեմի ծէսին հակասակ կարգադրութիւնը Տաճկաստանի Հայոց վերայ, որոնք վերջին ուսուտաճկական պատերազմի ժամանակ դադարել էին յիշատակելու նոյն իսկ երկու օծեալ կաթողիկոսներին Եփրամին և Յովհաննէսին: Այս հանգամանքը կարեոր է համարում առնել նկատողութեան այն պատճառով, որ Մուսաց կառավարութեան բարի գիտաւորութիւններն այնահետ Տաճկաստանում միշտ թիւր մեկնութիւն են գտնել, որ Տաճկի կառավարութիւնը միշտ արգելը է եղել երկու պետութիւնների մէջ եղած Հայերի պաշտօնական հաղորդակցութեանը և որ հազիւ վերականգնել է այդ

միջոցին յարաբերութիւնը Տաճկաստանի Հայոց մաս-
նակցութեամբ վերջին համազգային ժողովի մէջ և
այդ՝ չնորհիւ բարեխնամ կառավարութեան հոգսերի:
Այս ամէնն աչքի առաջ ունենալով, Սինօդը կարծում
է, որ հարկէ զգուշութիւն ունենալ, որպէսզի խակ
կարգադրութիւն չինի նոյնիսկ Ներսէս արքեպիսկո-
պոսին էլ անհաճոյ, քանիոր նա ինքն էլ քաջ ծանօթ
է և լաւ զիտէ Հայաստանեաց եկեղեցու վաղեմի ծէ-
սը: Իրենց այս մտքին աւելի ոյժ տալու համար Սի-
նօդի անգամիները մէջ են բերում և այն թէ, Հայոց
եկեղեցու աւանդութիւններին համաձայն տմինայն
Հայոց կաթողիկոսը իւր օծումից յետոյ պէտք է ու-
ղարկէ ընդհանրական ծանուցողական կոնդակներ բո-
լոր Հայերին Տաճկաստան, Պարսկաստան, Հնդկաս-
տան և Ռուսաստան, և այն կոնդակներն եկեղեցինե-
րում հանդիսով կարդալուց յետոյ յիշատակում են ա-
պա և կաթողիկոսի անունը:

Սինօդի ընթած պատճառաբանութիւններից ակ-
ներն է լինում այն, որ Հայոց Մայր Ս. թռուում կար և
պահուում էր մի հաստատուն ծէս, կաթողիկոսի ան-
ուան յիշատակութեան վերաբերեալ հին աւանդու-
թիւն, որի հետ կապուած էր և կաթողիկոսին յատուկ
պատիւների և արտօնութիւնների կիրարկութիւնը:
Այդ աւանդութիւնն հետեւալն է.

Ա. Ընտրեալ կաթողիկոսը մինչև իւր օծումը ոչ
մի արտօնութիւն կամ առաւելութիւն չունի.

Բ. Ս. Օծումն ընդունելուց յետոյ նոյն ո. պատա-
րագին, որ մատուցանում է ինքը, նուիրեալը, նա

պարտաւոր է նախ յիշատակել իւր նախորդներին և
ապա գպիրները Գոհութիւն մաղթանքի մէջ առաջին
անգամ յիշատակում են նորընտիր կաթողիկոսի առ
նունը.

գ. Ընտրեալ կաթողիկոսը մինչև իւր օծումը
Մայր Եկեղեցում կանգնելու է պատուաւորագոյն տես
զում, բայց ոչ կաթողիկոսարանում, իսկ ո. օծումն
ընդունելուց յիտոյ երեկոյեան ժամին եպիսկոպոսնե
րի առաջնորդութեամբ իջնում է Եկեղեցի, երկրպա
գում է Ս. Իշման սեղանին, ապա Սինօդի պատուաւո
րագոյն անդամներն հրաւիրում են նորան կաթողիկո
սարանում յատկացեալ աթոռին բազմելու.

դ. Մայր Աթոռում այս ծէսերը կատարելուց յի
տոյ միայն նա իրաւունք ունի կաթողիկոս կոչումը
կրելու, այդ կոչմանն յատուկ կնիքը գործ դնելու և
կարմրագեղով ու ծաղկեալ թղթեր, կոնդակներ գրելու.

ե. Մայր Աթոռից դուրս միւս Եկեղեցիներում ա
մէն տեղ նորընտիր կաթողիկոսի անուան առաջին յի
շատակութիւնը լինում էր այն ժամանակ միայն, երբ
հանդիսաւոր կերպով Եկեղեցիներում կարգացւում էր
նորա անդրանիկ կոնդակը, որից յիտոյ միայն լինում
էր և անուան անդրանիկ յիշատակութիւնը:

Եսքան որոշ և պարզ աւանդութիւնը, որ տա
րիներով պահուել և գործ էր դրուել Հայոց Եկեղեց
յում, չէր կարող անձանօթ լինել ազգի հոգեսր և
մարմաւոր առաջնորդներին: Եւս առաւել չէր կարող
անձանօթ լինել այդ և Տ. Ներսէս Ե. կաթողիկոսին,
որն արգէն յիսուն տարի շարունակ հոգեսր աստիւ

ճաններ ունէր և իւր ժամանակի բազմափորձ և բազմահմուտ եկեղեցականներից մէկն էր, զուցէ և միակը:

Հարցը սակայն այնպիսի ճանդամանքների մէջ յառաջ եկաւ, որ ձախող հետեւանքների ճանապարհ բացեց և լուծումն գտաւ նախնի աւանդութեանը բոլորովին ներհակ ոգւով:

Տեսնենք այժմ թէ ի՞նչ էին այդ ճանդամանքները և ի՞նչպէս են լուսաբանում նոքա այդ ճարցի լուծումը:

Սինօդի և պրօկուրօրի միջև պաշտօնական թվղթերի փոխանակութիւնն և այն տարածայնութիւնը, որ սեղի ունեցաւ կաթողիկոսի անուան յիշատակութեան նկատմամբ, Կովկասի գլխաւոր կառավարութիւնն ճաղորդեց ներքին գործերի նախարարին: Վերջինս ստիպուած էր նոյնը զեկուցանել կայսեր: Այդ զեկուցումն անմ եկաւ զարկ և զօրութիւն աւլուայն պաշտօնական յայտարարութիւններին և ամբաստանագրերին, որոնք նորանից յառաջ ճասկ էին Ս. Պետրը թէ Մայր Աթոռի միաբանութեան, թէ Սինօդի անդամների և պաշտօնեանների և թէ Հայոց հոգեսրականութեան միքանի ներկայացուցիչների վերայ: Կառավարութեան շրջաններում արդէն բաւական զայթակղուած էին, և ապարեաններն էլ տեղեկութիւն ունէին ամբաստանութիւնների մասին. ի վերջոյ՝ կաթողիկոսին ևս յայտնի եղան նոքա թէ գրով և թէ խօսքով: Ծերունին լսեց և վշտացաւ, նա ճաւաստի եղաւ, որ ներքին գործերի նախարարութեան աստիճանաւորները, որոնք նշանակուած էին կաթողիկոսի

ընտրութեանը կառավարութեան կողմից նւրկայ լինելու (Ժէլաօռւխին և Հայրապետեանց), Ս. էջմիածնից Ս. Պետերբուրգ վերադարձնալով, շատ տխուր և աննայաստ տեղեկութիւններ են հաղորդել նախարարին, որն իւր գրաւոր զեկուցման մէջ կայսրին յայտնել էր Մայր Աթոռի և Հայոց հոգեորականութեան վերաբերեալ անհանոյ զրոյցները: Թագաւոր կայսրը, կարգալով այդ զեկուցումները, մակազրել էր իւր ձեռքով «Ընթերցայ և տեղեկացայ յոյժ անբաւականութեամբ»: Այդ տեղեկութիւնների վերայ ծերունի հովուտպեալ սաստիկ դառնացաւ, և երկար ժամանակ կարելի չեղաւ փարատել այդ վիշտը:

Զեկուցման բուն աղբիւները, աստիճանաւոր Ժէլաօռւխինը, թարգման Հայրապետեանցը և պրօկուրօր Մատինհանցը, այնպիսի անձնաւորութիւններ են, որ երկար ապրած չեն Մայր Աթոռում և Հայոց հոգեորականութեան հայեցքները, բարքերն ու գործելակերպն ուղիղ ըմբռնել կարող չեն: Նոքա իրենց կարծիքները կազմում էին, անշուշտ, վայրկենական թուոցիկ տպաւորութիւնների ներքոյ: Գուցէ և չարամիտ ու ճարպիկ մարդիկ ևս ազգած լինէին նոցա վերայ: Այս ամենը կարելի է նկատել նոցա զրած ամրաստանութիւնների համառօտ ըովանդակութիւնից, որ է այս.

Տեղապահ Բալսիդ արքեպիսկոպոսը զուրկ է վարչական ընդունակութիւնից, ուստի և վեասում է Սինօդի կառավարութեանը: Պրօկուրօրի առաջարկութեան և Սինօդի կարգադրութեան հակառակ նա չէ

կամեցել շինել տալ ո. միւռոնի կաթսայի վերայ մարմարիոնեայ պահարան (Տ:Ը) և թէպէտ վարպետներին արձակելու ժամանակ պատճառն է բոնել եղանակի ցրառութիւնը, սակայն այդ լոկ պատրուտի է, իսկական պատճառն այն է, որ տեղապահը մտածել է թէ կաթողիկոսն արգէն ծանր հիւանդ է և կարող է շուտով վախճանել և այն պահարանի վերայ գործ դրուած ծախսը զուր կ'անցնի: Նմանապէս տեղապահն է, որ չէ կամեցել կարգադրել կաթողիկոսի անուան յիշատակութիւնն եկեղեցիներում դարձեալ այն մըտքով թէ նա հիւանդ է և այնքան չպիտի կարողանայ ապրել, որ օծուի: Բարսեղ ամբաստանւում էր և անհաւատարմութեան մէջ. լուսարարապետ եղած ժամանակ իրը թէ նա եկեղեցական զարգերի և զգեստների տկներն ու մարգարիտներն հանել ու վատնել է, ուխտաւորների արգիւնքները գաղել է և այլն:

Բարսեղի տեղապահութեան ժամանակ լուսարարապետ էր Սինօղի անգամ Վեհապետեան Յովսէփի և պիսկոպոսը, որ ճարպիկ ու գործունեայ վանականներից մէկն էր և յայտնի էր «պստիկ Ներսէս» անունով: Նա խորհրդարար յայտնել է Ժէլտունինին և Հայրապետեանցին թէ մինչև Բարսեղ եպիսկոպոսը մէջ տեղեց չենի, Մայր Աթոռն և Սինօղը չեն կարող գոնել իրենց «լուսաւոր» կարգը: Թէ Վեհապետեան և թէ Արարատեան Ստեփան եպիսկոպոսը, որ նոյնպէս Սինօղի անդամ էր, ամբաստանւում էին իրրե անհանգիստ մարդիկ, որոնք արժանի են աքսորի: Առհասարակ բոլոր Սինօղի անդամներն ամբաստանւում

էին, որ միշտ իրար հակառակ են, իրարու արիւն են խմում, և իրար հետ միաբան են միայն եկեղեցական զգեստներն ու թանգագին անօթները վաճառելու և զուր ծախսեր ստեղծելու գործի մէջ։ Սինօդականների այդպիսի ընթացքի երեսից Մայր Աթոռն այնքան զուրկ է զոյքերից, որ մինչեւ անզամ մի ձեռք փառաւոր զգեստ չէ մնացել, և հարկաւոր ժամանակ ստիպուած են եղել դիմել Աստրախանի վիճակաւորին և նորանից բերել տալ զգեստ։ Իրեւ ջատագովութեան արժանի անդամներ Ս. Էջմիածնի միաբանութեան մէջ միայն Արագածունի Ղուկաս և Շահնշաթունեան Յովհաննէս եպիսկոպոսներին էին անուանում և երիտասարդ Եսայի վարդապետին և այլն։ Մայր Աթոռից դուրս ամբաստանուած էր նաև Թիֆլիսի Հայոց առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը։ Աւելի հաւաստի հղաւ Տ. Ներսէս Ե. այն ընդարձակ բողոքներից, որ պրօկուրօրն ուղարկել էր ուղղակի կաթողիկոսին։ Նորա այդ բողոքագիրը բազկացած էր 46 յօդուած ամբաստանութիւններից Սինօդի անդամների, Հայոց հոգևորականութեան, յատկապէս Կարապետ արքեպիսկոպոսի և Սինօդի ատենապետ Քարտաշեանի վերայ։

Այդ ամբաստանութիւններով սակայն բնաւ չի նուազում այն պատճառաբանութիւնների ոյժը, որոնք հիմք եղան Սինօդի պրօկուրօրի առաջարկը մերժելու։ Ընդհակառակն ակներեւ է, որ ամբաստանողներն, այդ պատճառաբանութիւններն հերքելու ոչ մի զօրաւոր փաստ չունենալով, աւելի ևս ոյժ տուին նոցա։ Ինչ վերաբերում է ամբաստանեալներին, նոցա շատ լաւ

էր ճանաչում ինքն Տ. Ներսէս Ե. նա գիտէր նոցա
խրաքանչիւրի արժանիքն ու պակասութիւնները. չէ՞
որ նա ոմանց հետ զործակից է եղել, ոմանց իրեն
ձեռքի տակ է ունեցել իսկ բոլորի մասին անընդհատ
տեղեկութիւններ էր տանում իւր բարեկամների և
մտերիմների թղթերով: Տէրութեան աստիճանաւորնե-
րին, որոնք Ա. էջմիածնում գործող մարդիկների ճա-
նաչողութեան մէջ անփորձ էին, կարող էր մոլորեցնել
այս կամ այն չարամիտ կամ չարագրգիռ անձը, այդ-
պիսի անձինք ամեն հասարակութեան մէջ էլ պատա-
հում են. այնպէս որ տատիճանաւորների միակողմա-
նի զեկուցմանը վստահիլ և Մայր Աթոռի ամբողջ հո-
գևորականութեան վերայ գայթեակղուած լինել կարելի
չէր: Հարկ էր սակայն արատը ջնջել, որպէսզի հոգիոր
ծայրագոյն իշխանութիւնն ինքը, որի ներկայացու-
ցիչն այն ժամանակ բարձրագոյն հաճութեամբ Տ.
Ներսէս Ե. էր ճանաչուած, չամբաստանուի իրրե ան-
տարբեր և իրրե պաշտպան անկարգ կամ պակասաւոր
պաշտօնիաների: Հարկն ստիպից կաթողիկոսին վճռա-
կան ընթացք բանելու: Նախարարի կողմից առաջար-
կուեցաւ նորան փոփոխութիւններ անել և խիստ պա-
տիժներ գնել զանցառու հոգեւորականների վերայ: Պա-
հանջուռմ էր, որ նա Միհողի անդամներին հեռացնէ Ա.
էջմիածնից և մի մի վանք զրկէ աքսոր ու նոցա տեղը
նոր մարդիկ նշանակէ: Նախարարի պահանջից զա-
կաթողիկոսի վերայ ազգեցութիւն ունեցան նաև իւր
շրջապատողները, մանաւանդ Լազարեանները, որոնք
նոյնպէս շատ վշտացած էին և անհաճոյ լուրերի ու

տեղեկութիւնների վերայ իրենց շատ ամօթահար էին
զգում օտարների առաջ: Այս պահանջներին տեղի տա-
լով, կաթողիկոսը տնօրինեց, որ Ս. Եջմիածնից հե-
ռանան Վեհապետեան Յովսէփ և Արարատեան Ստե-
փան եպիսկոպոսները, որոնց ինքը քաջ գիտէր, փոր-
ձել էր և արժանի համարեց պատուհասի. նոցանից
մէկին հրամայեց աքսորել Խորվիրապի վանքը և միւ-
սին Գեղարդ: Միւս անդամների և Կարտպետ արքե-
պիսկոպոսի համար վեհը բարւոք համարեց չշտապել.
նա կարծում էր, որ անախորժ գրութիւնը կարելի
կըլինի այլ կերպ ուղղել:

Դալով կաթողիկոսի անուան յիշատակութեան
խնդրին, որ ամբաստանութիւնների կեղըոնն էր կազ-
մում, քանիոր յայտնի ճանապարհներով այս ինդիրն
հասել էր կայսեր, բարձր կառավարութիւնն այնքան
բարեմիտ գտնուեցաւ դէպի Հայոց եկեղեցին, որ հար-
ցի լուծումը թողեց կաթողիկոսին: Տ Ներսէս Ե. լաւ-
ըմբռնեց վայրկենի լրջութիւնը, բայց նա տկարացաւ
իւր պարտաճանաչութեան մէջ և, ունենալով հնար
այլ կերպ վարուելու, խնդրին լուծումն տուեց հին աւ-
տանդութեան հակառակ, առ ոչինչ համարելով Սինօղի
բերած հիմնաւոր ու ծանրակշու պատճն ուարանու-
թիւնները: Նա, որ գնացել էր կայսեր զուոը, որպէս-
զի թարգման լինի օտարհպատակ ազգայինների ար-
տայայտած բուռն ցանկութեանը փոխելու կամ բարե-
փոխելու Տ. Յովհաննէս Բ. կաթողիկոսի ընդունած
Պալամէնիկն, որ շատ զգոնութիւնների առիթ էր հ-
ղել ամէն տեղ, ինքն, այդ օրէնսդրութեան մի յօդ-

ուածի վերայ հիմնուելով, խնդիրը նկատեց իրեկ պարզ հոգեոր գործ, որ Սինօդի քննութեան առարկայ լինելու չէր, և 1844 Յունվարի 21-ին թ. 22 մի կոնդակ տուեց տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսի անուանը (կամ ինչպէս վերջինս է ասում ոչ կոնդակ այլ «առաջադրութիւն»), կաթողիկոսն այդ կոնդակով տալիս էր տեղապահին հետեւել հրամանները. նախ՝ ճարկուդրել Սինօդին, որ իւր բոլոր անդամների ստորագրութեամբ զրէ իրեն «զ տ ե զ ի ա յ ն պ ի ս ի կ ա ն ո ն ա ց ն ա խ ն ա կ ա ն ա ց յ ա զ ա գ ս ո չ յ ի շ ա տ ա կ ե լ ո յ զ ա ն ո ւ ն կ ա թ ո ղ ի կ ո ս ի ն ա խ ն ք ա ն զ օ ծ ո ւ մ ն », երկրորդ՝ եթէ մինչ ցայն յիշատակուած չէր կաթողիկոսի անուանը Ա. Եջմիածնի տաճարում կամ ճայրապետական թեմի բոլոր եկեղեցիներում, ինքը, Բարսեղ արքեպիսկոպոսը. հէնց առաջին կիւրակէին ու պատարագ մատուցանէ և յիշատակէ նորա, Տ. Ներսէս Ե. կաթողիկոսի, անուանը և իրեկ «տեղակալ» հրամանագրէ ճայրապետական թեմի կոնսիստորիային և բոլոր հոգեոր կառավարութիւններին, որ նոքա տնօրինեն թեմի բոլոր եկեղեցիներում յիշել նորընտիր ճայրապետին:

Թէ ինչև Տ. Ներսէս Ե. բանի տեղ չպրեց Սինօդի պատճառաբանութիւններն և պահանջեց, որ նորան հաստատուն նախնական կանոն ցոյց տրուի, յայտնի չէ: Ակնհերեւ է սակայն, որ կաթողիկոսն ինքն էլ զգում էր, թէ իւր հրամանն արդիւնք է կամայական բացատրութեան և ոչ այլ ինչ է եթէ ոչ մի միջին ձանտպարհ: Այդ երեսում է այն բանից, որ նա խնդիրըն իւր ամբողջութեան է էութեան մէջ չլուծեց: Առա-

ջարկուած էր կաթողիկոսի անունը յիշատակել կովկասիան թեմերի բոլոր եկեղեցիներում: Այդտեղ մըտնում էին ոչ միայն Ս. Էջմիածնի վանքն և այն ժամանակուայ Երևանու թեմը, այլ և Թիֆլիս, Շուշի և Շամախի իրենց եկեղեցական թեմերով: Կաթողիկոսը միւս թեմերի համար տեղապահին ոչ մի պատուէր չաւանդեց: Լուսթիւն պահպանեց նա և օտար սահմաններում գտնուող եկեղեցական թեմերի մասին: Հակասութիւնն ակներե է: Եւ այդ տեղի ունեցաւ այն հանգամանքի երեսից, որ կաթողիկոսն աչքի առաջ է ունեցել անշուշտ ոչ թէ խնդրի էութիւնն, այլ այն, որ խնդրի լուծումն իրեն վերապահուի և նոր օրէնսդրութեան կամ նոր վարչական կարգադրութեան դիմել չստիպուի բարձր կառավարութիւնը:

Տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսը ճշգիւ կատարեց կաթողիկոսի հրամանը, իսկ Սինօզը վեհի հարցմանը պատասխանելու համար տեղապահի 1844 Մարտի 23-ին տուած առաջազրութեան հիման վերայ Մայիսի 1-ին նոր օրագրութիւն կազմեց և որոշեց ուղարկել կաթողիկոսին այն օրակիրը, որ կազմուել էր 1843 Նոյեմբերի 12-ին, և խոնարհաբար յայտնել, որ Սինօզի անդամները բացի ընդունուած սովորական կարգից և այն հանգամանքներից, որոնք նոյն օրագրում յիշուած են, ուրիշ նախնական կանոններ չեն ունեցել աչքի առաջ. միւնոյն ժամանակ նոքա խրնդրում ին «նորին վիճափառութեան հայրապետական

ներողամտութիւնը*»: Այսպէս փակուեցաւ կաթողիկոսի անուան յիշատակութեան խնդիրը Ս. Էջմիածնի Սինօգում: Առ 1 Մայիսի 1844 ամի կաթողիկոսի անուան յիշատակութիւնը սահմանափակուած էր այսպիսով Բէսարարիոյ, Ն. Նախիջևանի և Երևանու թեմերում, Ս. Էջմիածնի վանքում և, եթէ հաւատանք պլրօկուրօրի տուած տեղեկութեանը, նաև Աստրախանի թեմում, որ Կովկասի սահմաններից դուրս է: Միւս բոլոր տեղերի մասին չկայ ոչ մի կարգագրութիւն: Յայտնի է սակայն, որ 1844 Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցաւ կաթողիկոսի անուան անդրանիկ յիշատակութիւնը Կ. Պօլսի Հայոց Բերայի հկեղեցում: Այս վերջին դէպքը պատմական այնպիսի նշանակութիւնմունեցաւ, որ արժէ փոքր ինչ կանգ տանել նորա լուսարանութեան վերայ:

Գ.

Բարձր Դրան հրամանով 1826 թուից սկսած դադարել էր ամենայն Հայոց կաթողիկոսի անուան յիշատակութիւնը Տաճկաստանի Հայոց հկեղեցիներում, մինոյն ժամանակ և փակուած էր Ս. Էջմիածնի նուիրտկների մուտքը Տաճկաստան**: Մինչև 1844 թուականն այդ զրութիւնն այդպէս էլ մնաց: Ոչ Տ. Եփրեմ Զորագեղցին և ոչ Տ. Յովհաննէս Բ. Կարբեցին չկա-

*) Տ. Ա. Ի. Սեղբակեանի, Յովհ. Կող, Շահիս-Կ. կենսագր. 138-152 և 155-167.

**) Տ. Պէրպէրեան Ա. Պամ. Կ. Պօլ.

ըողացան վերացնել տալ յիշեալ արգելքները, գանելով ընդդիմութիւն կ. Պօլսոյ Հայոց պատրիարքի և ազգեցիկ իշխանների, ամիրանների, կողմից Մայր Աթոռի հեղինակութեան համար երկու հարուածներն էլ զգալի էին. խզումն աւելի զօրեղ արտայայտութիւն գտաւ, երբ տեղի ունեցաւ Տ. Եփրեմի հրաժարումն և նորա յաջորդի, Տ. Յովհաննէսի ընտրութիւնն ու ձեռնազրութիւնն առանց օտար սահմաններում գտնուող թեմերի գիտութեան և մասնակցութեան, Եթէ Տ. Եփրեմի կաթողիկոսութեանը Բարձր Դուռը անբարեհաճ աչքով նայեց այն հիման վերայ, որ, ինչպէս վաղեմի սովորութիւնն էր, նորա հաւանութիւնը կամ հաստատութիւնը չինդրուեցաւ, այլ բաւական համարուեցաւ միայն Ռուսաց կայսեր բարեհաճութիւնը, Տ. Յովհաննէս Բ. կաթողիկոսին ընականաբար աւելի ևս չպիտի ձանաչէր, քանիոր նա ընտրուեցաւ, հաստատուեցաւ և ձեռնազրուեցաւ այնպիսի ժամանակ, Երբ Մայր Աթոռն արդէն ընկած էր Ռուսաց տէրութեան սահմանների մէջ վերջին ոռուապարսկական պատերազմից յետոյ 1827 թուին, որին յաջորդեց ոռուածկական պատերազմն 1828 Ապրիլի 14-ին, երկու սահմաններից պետութիւնների քաղաքական լարուած զրութիւնն առանց ազգեցութեան չմնաց և հպատակ ժողովրդի վերայ, թէ Պարսից և թէ Օսմաննեան Հայոց գաւառներից սկսեցին մեծամեծ խմբերով գաղթել դէպի Ռուսաց նոր նուածած հայկական գուառներն, յանձն առնելով անփոխարինելի կորուստներ, միմիայն քրիստոնեայ թագաւորի հովանին ու ողորմութիւնը վայե-

լելու քաղցր ակնկալութեամբ։ Թէ Պարսիկ և թէ Տաճիկ կառավարութիւնները չխնայեցին ամենայն ճիզն համոզելու ժողովրդին, որ չձգեն իրենց բնիկ վայրելն և չփաղթեն։ Կարապիտ պատրիարքը (1823—1831) Դրան պահանջներին տեղի տալով, մարդիկ ուղարկեց կարին և խստումներ արաւ յիշեալ նպատակին հասնելու։ Նոյնը Պարսից զրան կողմից յանձն առաւ կատարելու իորայէլ եպիսկոպոսն Ատրպատականում։ Բայց երկուսի ջանքերն էլ զուր անցան։ Նոցա հակադիր գործիչներն աւելի զօրեզ էին. նոցա մէջ կային մէկ կողմից Կարնոյ Կարապիտ և Բառենու Ստեփանոս Խաժակնեանարքեպիսկոպոսները, միւս կողմից Բարսեղ արքեպիսկոպոսը, որ գործում էր յատկապէս Ներսէս արքեպիսկոպոսի հրահանգներով և հայազն գնդապիտ Լազարեանի հետ միասին։ Այնպէս որ գաղթականութիւնը շխափանուեցաւ, և այդ տեղի ևս զօրացուց մահմեդական պետութիւնների կասկածութիւնը Հայոց առաջնորդների, յատկապէս հոգեկորականութեան, հաւատարիմ հպատակութեան նկատմամբ։ Այս պայմաններն աչքի տուած ունենալով, հասկանալի կը ինչո՞ւ կ. Պօլսի պատրիարքներն այնքան երկար ժամանակ գիտութեամբ ձըգձըգում էին բանակցութիւնները՝ Մայր Աթոռի հետ նախկին յարարերութիւնները վերսկսելու համար։ Նոցա մէջ Ստեփանոս Աղաւենին 1831—1839 թ.) բուլոր իւր պատրիարքութեան ընթացքում ճարպիկ ու զգուշաւոր քաղաքականութեամբ, յետ էր մզում Տ. Յովհաննէս Բ. կաթողիկոսի պահանջները, որոնք ան-

ուղղակի գրուուծ էին նորա առաջ Ռուսաց արտաքին գործերի նախարարութեան և Կ. Պօլսոյ գեսպանի միջոցով։ Առանց ժխտելու, որ Տաճկաստանի Հայերը պէտք է ճանաչեն և ճանաչում են Մայր Աթոռի նախամեծարութիւնն իրեն ազգային հոգինը նուիրական կեդրոնի և ընդունում են իրենց վերայ ինչ ինչ բարյական պարտականութիւններ, Ստեփանոսոս պատրիարքը չէր տատանւում սակայն մերժելու Տ. Յովհաննէսի հայրապետութիւնն, համարելով այդ անընդունելի Տաճկաստանի Հայոց համար։ Զուր անցան Ռուսաց կառավարութեան բոլոր դիւանագիտական ջանքելն յաջողեցնելու, որ Կարբեցին ճանաչուի պատրիարքարանի կողմից և նորա անունն յիշատակուի եկեղեցիներում։ Այսպէս՝ 1826-ից մինչեւ 1844 թուականը Տաճկաստանի Հայերն, իրենց Ս. Էջմիածնի հայրապետութեան գաւազանի տակ ճանաչելով հանդերձ, չճանաչեցին Տ. Յովհաննէս Բ. Կարբեցու կաթողիկոսութիւնն և չյիշատակեցին նորա անունն իրենց եկեղեցիներում։ Քանիոր այս այսպէս էր, այլ ևս ինչ խօսք կարող էր լինել նուիրակներին ընդունելու, Մայր Աթոռի անունով նուէրներ ժողովելու և պէս պէս արդիւնքներ ստանալու մտսին, որոնք 1826 թուից յառաջ սովորական էին։ Միակ յարաք-րութիւնը Մայր Աթոռի հետ եպիսկոպոսացուների երթեկութեամբ էր լինում, որոնք իրենց հետ բերում էին Ս. Էջմիածնի ուխտաւորներ և վերագործին տանում էին այնտեղից ու միւսոնը։ Տ. Յովհաննէս Բ.

*.) Տ. Երիցեան Ա. Ամ. Կաթող. Բ.

կաթողիկոսի ձեռնադրած 41 եպիսկոպոսներից 14 է
միայն Տաճկաստանի Հայոց կողմէց։ Ահա այդ 14 ե-
պիսկոպոսների ձեռնադրութեամբ և պահուել է Տաճ-
կաստանի Հայոց կապը Ս. Էջմիածնի հետ 1831—1842
թուականներում։ Երրոր Տ. Յովհաննէս վախճանե-
ցաւ, այն ժամանակ կ. Պօլսոյ պատրիարքական ա-
թոռի վերայ էր Աստուածատուր արքեպիսկոպոսը
(1841—1844 թ.). սա հետամուտ եղաւ վերականգնե-
լու իւր տեսչութեան յանձնուած հօտի յարաբերու-
թիւնը Մայր Աթոռի հետ։ Նորա ջանքերի պառզն
այն եղաւ, որ թէ ինքն և թէ միւս առաջնորդական
թեմերը Տաճկաստանի կողմից առանձին թղթերով կամ
պատուիրակներով մասնակից եղան 1843 Ապրիլի 17-
ին Ս. Էջմիածնի համագայլին ժողովում նոր կաթողի-
կոսի ընտրութեան համար։ Պէտք էր սպասել, որ հան-
գամանքները նպաստէին լիովին վերականգնելու
նախկին յարաբերութիւնը Մայր Աթոռի հետ։ սակայն
Աստուածատուր պատրիարքին այլևս վիճակուած չէր-
այդ ինքը մէջ նշանակութիւն ունենալ, որովհետեւ
1843 թուին կ. Պօլսոյ Հայոց պատրիարքարանի գոր-
ծերը շատ խառնուեցան, Շարժումն սկսուեցաւ Աստուա-
ծատուրի ղէմ, որը զարաւոր սովորութեան հակառակ
առանց ժողովրդական ընտրութեան պատրիարք էր
եղել 1841 Սեպտեմբերի 13-ին միմիայն Բարձր Դիրան
հրամանով։ Այդ հանգամանքն ինքն ըստ ինքնան մի
նշանաւոր պատճառ էր պատրիարքի ղէմ զինուելու,
սակայն Աստուածատուր չորս տարի կարողացաւ մը-
նալ աթոռի վերայ այն պատճառով, որ ժողովուրդն

ինքն երկպառակեալ էր. ամիբաներն ու արհեստաւորները շատ գժուռւած էին իրար մէջ. առաջիններն իսկապէս իրենց ձեռքն էին առել պատրիարքարանի գործերը. նոքա իշխում էին ելեմտի մատակարարութեան վերայ, որովհեան գլխաւորապէս նոցա քսակն էր աղբիւր եկեղեցական հաստատութիւնների նիւթական ապահովութեան. իսկ արձևաւորները կամ այսպէս ասած, ժողովրդական դասը, որ այնքան տալ չգիտէ որքան պահանջել հետամուտ էին խառնուելու պատրիարքարանի գործերին ամիբանների հետ միասին և նոցա չափ: Գժառութիւնն այնտեղն հասաւ, որ ժողովուրդը բողոքեց սուլթանին ամիբանների գէմ: Դուռը նախ բանտարկեց ազերսազիր տուողներին և ապա ժողովրդի յուզմունքից քաշուելով, արձակեց առանց բաւարարութիւն տալու նոցա խնդրին: Այդ կերպով գժուռւթիւնը չդադարեցաւ: Աստուածատուր պատրիարքը տեսնելով, որ ժողովուրդը չի ուզում տեղի տալ ամիբաններին և պատրաստ է ամեն զրկանք ընդունելու, Վեզիր Խանի մէջ ժողով գումարեց, ուր ներկայ էին ամիբանների և ժողովրդի երեսփոխանները: Այնտեղ Տատեան Յովհաննէս և Արգումանեան Արգուման ամիբաններն իրենց ունեցած լիազօրութեամբ յօժարութիւն յայտնեցին համակերպելու ժողովրդի ցանկութեանը: Այս մասին պատրիարքարանը տեղեկութիւն տոււց կառավարութեանը. 1841 Դեկտեմբերի 12-ին Բարձր Դուռը պաշտօնաւէս իրաւունք տուեց, որ արհեստաւորների դասից 27 հոգի կարգադրեն ելեմտի մատակարարութեան գործե-

ըր: Ամիրանիքն ու պատրիարքարանը մինչեւ անգամ պարտաւորուեցան այդ գործերին չխառնուելու: Սակայն երբ բանը գործադրութեան հասաւ, շուտով ակներեւ եղաւ ժողովրդի ներկայացուցիչների անկարուղութիւնը: Չէ՞ որ մատակարարութեան անիւը դարձնող զօրութիւնը տուրքերի ու նուէրների կանոնաւոր և ապահով գանձումն է: Քանիոր ամիրանիքն աւելորդով իսկ իրենց զրապանից վճարում էին եկեղեցու պէտքերի համար ամէն ինչ, իսկ նոցա հակառակորդները մինչեւ անգամ գծուարանում էին նոցա տուածի տասանորդը վճարելու, ինչ կարող էին անել 27 երեսփոխաններն առանց պատրիարքարանի և ամիրանիքի: Նոքա իրենց ակարութիւնը խոսանվանելով 1842 նոյեմբերի 13-ին խսպաս ձեռնթափ եղան և հրաժարական տուին Բ. Դրանը: Վարչութեան ղեկը դարձեալ ամիրանիքի ձեռքն անցաւ, այս անգամ նոքա էլ ղծուար կացութեան մէջ ընկան, ժողովրդի ներկայացուցիչների աչքը բացուել էր. նոքա ելեմտի հաշիւները լաւ հասկացել էին, ուստի և ամեն անգամ միջամտութիւն ցոյց տալով, գործերի կանոնաւոր ընթացքը խանգարում էին: Երեսցաւ, որ ժողովրդի հետ խաղաղ ապրելն անկարելի է: Մի տարին էլ այսպէս անցաւ: Ի վերջոյ 1844 թուին ամառն ամիրայտկան մի ժողով եղաւ Եքիաննեան ամիրայի նախագահութեամբ իրերի վիճակը քննելու համար: Ժողովը այն եղրակացութեան հասաւ, որ գործերի խառնակ և անկանոն ընթացքի պատճառը պատրիարքի թուլութիւնն է, և մասնաւանդ այն, որ նա ազգի ընտրութեամբ չէ

կոչուած այդ պաշտօնին, ուստի որոշուեցաւ պահանչ-
ջել Աստուածատուրի հրաժարականը: Նա սիրով յան-
ձըն առաւ և փութաց իւր հրաժարականը ներկայաց-
նել Բ. Դրան: Անմիջապէս կարգադրուեցաւ նոր պատ-
րիաքի ընտրութիւն կատարել, նոյն իսկ ամսոն
Յունիսի 26-ին պատրիաք ընտրուեցաւ Զմիւռնիոյ
առաջնորդ Մատթէոս արքեպիսկոպոսը, որն և Յուլի-
սի 1-ին հաստատուեցաւ Բ. Դրան կողմից:

Նորընտիր պատրիաքը վազուց չէր, որ անձամբ
տեսել էր Մայր Աթոռի գրութիւնը: Նա Պրուսայի
առաջնորդ էր, որ 1838 Յունուարի 9-ին եպիսկոպոս
ձեռնազրուեցաւ Ս. Էջմիածնում: Այնտեղից վերադառ-
նալով, երկար չքաշեց, որ նա նոյն առաջնորդական
պաշտօնով անցաւ Զմիւռնիոյ տէրունի վիճակը, այս
պէս կոչում էին այն եկեղեցական թեմերը, որոնք
ամենայն Հայոց կաթողիկոսի անմիջական իրաւունքի
տակ էին կ. Պօլսոյ պատրիաքարանից անկախ և ո-
րոնց համար կաթողիկոսական հաստատութեան
հրովարտակի մէջ առանձնապէս յիշատակութիւն և
լինում էր: Բայց որովհետեւ Բարձր Դուռը վերջին
երկու կաթողիկոսներին, Եփրեմին և Յովհաննէսին,
հաստատութեան հրովարտակներ չէր տուել, թուի թէ
Մատթէոսի առաջնորդութեան ժամանակ Զմիւռնիոյ
տէրունի վիճակը կ. Պօլսոյ իրաւացութեան տակ էր և
այնպէս էլ մնաց նորա յաջորդների օրով: Զմիւռնիա-
ցիք առհասարակ աւելի սերտ էին կապուած Մայր
Աթոռի հետ և առանձին իմն զորովով կարեկից էին
նորա վիճակին, 1834 թուին, երբ Ս. Էջմիածնի մէջ

մի փոքրիկ խլսումն ընկաւ Տ. Յովհաննէս Հ. կաթողիկոսի գէմ և այդ լուրն, անշուշտ, չափազանցուցած հասաւ նաև Զմիւռնիայ. Խորին վիշտ զգացին Զմիւռնիացիք և իրենց որտի սփոփանքը որոնեցին Աշտարակեցի Ներսէս արքեպիսկոպոսի մօտ, որն այն ժամանակ Քիշնե էր և նկատուած էր իբրև հակառակորդ Յովհաննէսի և միակ նախանձաւոր Մայր Աթոռի պայծառութեան: Առասարակ Ներսէս մեծ անուն ունէր Տաճկաստանում, մանաւանդ Զմիւռնիայում, ուր նա ընդունել էր իւր քահանայական ձեռնադրութիւնն և գործել էր երիտասարդական հասակում: Զմիւռնիացիք ահա թէ ինչ են զրում Ներսէսին Մայր Աթոռում տիրող շփոթութիւնների վերայ իրենց խորին վիշտն յայտնելուց յետոյ. «Զբարձր սրբազնութիւն ձեր գիտեմք, ասում են, ազգասէր և աթոռասէր և բազում անգամ փորձիւ ի վերայ հասեալ եմք, և ընդ այս զարմանամք, զի լսելով զայսպիսի բանեզեղեղ աղէտն իւռութեան ծրարս թագուցանէք»*: Հաւանականութիւնից հեռու չէ, որ Մատթէոս արքեպիսկոպոսը իւր առաջնորդութեան ժամանակ Զմիւռնիայում յարած լինէր Ներսէսի բարեկամներին և նոցա միջոցով առանձին համակրութեամբ կապուած լինէր նորա հետ: Աչքի առաջ ունենալով և այն, որ 1831—1844 թուականը շարունակ բանակցութիւններ էին լինում Կովկասիան կառավարութեան միջոցով կ. Պոլսոյ Ռուսաց դեսպանի և պատրիարքարանի մէջ կաթողիկոսի ան-

*) Տ. Ա. Երիցեան Ամենայն Հ. կաթող. Բ. 62:

Նուան յիշատակութեան մասին, որոնք սակայն բոլորն ապարդիւն մնացին, բնական է տեսնել այն, որ Մատթէոս, ընտրուելով պատրիարք, ինքնայօժար ցանկանար վերացնել ձգձգուած այդ խնդիրը, միանգամից երկու կողմն էլ շահելով՝ թէ Ծուուաց կառավարութեան, որ տարիներ աշխատում էր Կ. Պօլսում, և թէ նորընտիր կաթողիկոսին։ Մենք չգիտենք թէ նորա ընտրութեան գործին խամանէին, գէթ անուղղակի, Ծուուաց դիսպանն և Տ. Ներսէս Ե. Գուցէ առաջինն յայտնի թելադրութիւններ անել չհամարձակէր միջազգային փափուկ գրութիւն ունենալով աչքի առաջ։ Սակայն չենք կարող չմտածել, որ Մատթէոսին պատրիարք ընտրող եկեղեցական և աշխարհական հրեեւիներն աչքի առաջ չունենային նորընտիր վեհի ցանկութիւններն և այն տագնապը, որի մէջ էին Մայր Աթոռի նկատմամբ Տաճկաստանի Հայոց եկեղեցիները։ Այսպէս թէ այնպէս՝ Մատթէոս պատրիարք, ինչպէս տհասանք, 1844 Սեպտեմբերի 14-ին իւր անդրանիկ պատարագի մէջ Բէրայի եկեղեցում տուաջին անդամ յիշատակից ամեմենայն Հայոց կաթողիկոսի անունը, որ 1826 թուից յիշուած չէր։ Թէպէտ ոչ հայրապետական կոնդակ կար մէջ տեղը և ոչ որևէ հրաման կամ «առաջադրութիւն», և թէպէտ Մատթէոս էլ քաջ ծանօթ էր հին տւանդութեանն և պէտք է նշանակութիւն տար այն պատճառարանութիւններին, որոնցով առաջնորդուել էր Ս. Էջմիածնի Սինօղը, սակայն նա չքաշուեցաւ այդպիսի մի քայլ անելու։

Տ. Ներսէս Ե. որ այդ ժամանակ արդէն Ա. Պե-

տերբուրդից Քիշնե էր վերադարձել, փութաց հայրապետական կոնդակով օրհնել Մատթէոսին և յայտնել իւր գոհունակութիւնը։ Պատրիարքն իւրեն չատ մեծ խրախոյս համարեց վեհի այդպիսի վերաբերմունքը, որ բարի ազգեցութիւն ունեցաւ ժողովրդի վերայ, ուստի, դէպքից օգտուել ուզելով, նա ինքն իւր կողմից փութաց լուծումն տալու նաև էջմիածնի վերաբերեալ երկու կարեոր խնդիրներին, որոնք են կաթողիկոսի անուան յիշատակութիւնը Տաճկաստանի բոլոր եկեղեցիներում և նուիրակների մուտքը Տաճկաստան։ Այդ նպատակով Մատթէոս մի մեծ ժողով գումարեց Մայր եկեղեցում, նախապէս առնելով Բարձըր Դրան համաձայնութիւնը քննելի խնդիրների մասսին, ժողովում ներկայ գանուեցան կ. Պօլսի Հայոց եկեղեցական և աշխարհական երեելիները։ Առաջին խնդրի համար ժողովի միաբան վճիռն եղաւ վերսկսել ամենայն Հայոց կաթողիկոսի անուան յիշատակութիւնը Տաճկաստանի Հայոց բոլոր եկեղեցիներում, իսկ երկրորդ ինդըրի մասին ժողովի մէջ միաձայն հաւանութիւն չեղաւ։ Բարձր Դրան կասկածներն աչքի առաջ ունենալով, Մայր եկեղեցու ժողովը այնուամենայնիւ բարւոք դատեց չպնդել նուիրակութեան վերսկսմանն և որոշեց ճանաչել կ. Պօլսի պատրիարքին ամենայն Հայոց կաթողիկոսի փոխանորդ և Մայր Աթոռի ծայրագոյն նուիրակ, նորա վերայ դնելով պարտականութիւն ո. միւռոնն ստանալու և բաշխելու Տաճկաստանի Հայոց եկեղեցիներին և ժողովը դական առւելքերն ու նուէրները Մայր Աթոռի անու-

նով ստանալու և տեղ հասցնելու*: Այս երկու որոշումներով հին, ձգձգուած խնդիրը դործնական լուծումն գտաւ: Կ. Պօլսի Հայոց պատրիարքը մինչ ցայն լոկ անուանական ստորագրեալն էր կաթողիկոսի: Նուիրակների երթեսեկութեան երեսից երբեմն նոցաինքնասիրութիւնը խոցւում էր. շատ տոիթներ են եղել, երբ պատրիարքները իրենց զիրքն ու պատիւը պաշտպանելու համար կաթողիկոսների իրաւունքների գէմ ոտնձգութիւններ են արել, որոնց Բարձր Դուռն էլ համակրութեամբ էր վերաբերում, ինչպէս այդ տեսնում ենք 1826—1844 թուականներին զործող պատրիարքների ընթացքից**: Մայր եկեղեցու վճիռների նշանակութիւնն այն է, որ նոցանով պատրիարքը ճանաչուեցաւ պատասխանատու կաթողիկոսի տուաջ թէ իրեն նորա փոխանորդ և թէ իրեն Մայր Աթոռի ծայրագոյն նուիրակ. ինչպէս ըստ հոգևորին տոհասարակ, նմանապէս և այդ երկու պարտականութիւնների համար նա անմիջապէս պիտի հաշիւ տայ կաթողիկոսին և նորանից միայն սպասէ հրահանգ և հատուցումն:

Կաթողիկոսի անուան յիշատակութեան այսպիսի յաջող ելքը Տաճկաստանում ժամանակակից հասարակութիւնը նկատեց իրեն մի նշանաւոր զործ: Հնդկաստանի Հայերը, որ այն ժամանակ անթարթ աչքերով հետեւում էին Մայր Աթոռի վիճակի հետ կապ ունեցող երկոյթներին, ինդութեամբ ողջունեցին «Կ. Պօլ-

*) Տ. Պէրպէրեան Ա. Պատմ. 5 դ.:

**) Տ. Երիցեան Ա. Բ. 30—37:

սի վերստին միաւորութիւնը էջմիածնի պատրիարքական աթոռի հետ» և Տ. Ներսէս Ե. կաթողիկոսին վերագրեցին այդ գործը. «Զարժանաւոր շնորհակալութիւն թնդ մատուցեն յիտազայք, որոց առաջի բացցին տմենայն հանգամանք այսպիսի մեծ ավաստակ գործոց, և գրեսցեն զանուն Ներսիսի ի թիւս մեծամեծաց հայրապետաց Հայոց» այսպէս ենք կարդում Կալկաթայի հայ պարբերականում*:

Դ.

Պաշտամունքների մէջ կաթողիկոսին յիշատակելն Հայոց հին սովորութիւններից մէկն է: ԺԲ. գարում Ներսէս Լամբրոնացին պատարագի մեկնութեան մէջ յառաջ է բերում խորհրդատեարի այն աղօթքը, որտեղ պատարագիչն յիշում է եպիսկոպոսներին և եպիսկոպոսապետին: Այն, որ գեռ ԺԲ. գարում այդ աղօթքը մեկնութեան առարկայ է դառել, ապացուցանում է թէ շատ հին ժամանակից է գալիս նորա կիրարկութիւնն Հայոց եկեղեցիներում: Լամբրոնացին աղօթքի վերջին մասն այսպէս է աւանդում. Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր շնորհելով մեզ ընդ երկայն առուրս:

Կան աւելի հին ցուցումներ, որ կաթողիկոսի յիշատակութիւնը լինում էր և եկեղեցական մաղթանքների մէջ: Դեռ Ժ. գարում ո. Գրիգոր Նարեկացին իւր գանձերի մէջ յատուկ մաղթանքներ ունի նախ հայ-

*.) Ազգասէը Արարատեան 1846:

բապետի, ապա եկեղեցական ուխտի և իվերջոյ թագաւորի և իշխանների մասին*: Ա. Նելսէս Շնորհալին ԺՅ. գարում իւր երկու գանձերի մէջ նոյնպիսի մաղթանքներ է անում, զնելով նաև անուան յիշատակութիւնը. Զհայրապետս մեր զտէր Ա. Ա. (այս անուն), Զթագաւորս մեր զտէր Ա. Ա. երգում է նա Վարդավառի և Վերափոխման գանձերի մէջ; ԺԵ. դարում զրչեայ տաղարաններից մէկում կայ մի մաղթանք, որի մէջ յատկապէս յիշուած է ժամանակի կաթողիկոսի, Տ. Կիրակոս Ա. Վիրապեցու անունը «Զհայրապետս մեր Կիրակոս առաքինութեամբ զնա զարգացն», տառած է այնտեղ**: Այս օրերի յիշատակագիրն ասում է թէ Տ. Կիրակոսի հակառակորդներն յաջողեցուցին նորան գահնկէց անել և ընտրեցին Զալալրէկեան Մակուեցի Գրիգոր արքեպիսկոպոսին, և երեանու իշխողի հաւանութիւնն առնելուց յիսոյ անմիջապէս ձեւնանաղը թեան կարգը կատարեցին և ս. պատարագի ժամանակ «Ճայնեցին Հայոց տեառն Գրիգորի»: Այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ ակնարկ, թէ այն ժամանակ Գոհութիւն մաղթանքի մէջ յիշեցին նոր կո թողիկոսի անունը***: Մեր եկեղեցու գործածական շարականներից մէկում ևո մաղթանքներ կան թաղաւորի, հայրապետի և Հայաստանեայց եկեղեցու լրութեան համար. այդ շարականը «Թագաւոր փառաց» որ երգում էն Ս. Աստ-

*.) Գանձ ի գալուստ ս. Հոգւոյն, Գանձ ի ս. Եկեղեցի և Գանձ ի ս. Խաչն:

**) Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, ԽԸ.

***) Թովմ. Մեծոփեցու Յիշատակարանը, 81:

ուածածնի ծննդեան յիշատակին, համարւում է ժԴ.
դարու նշանաւոր վարդապետ Վարդան Բարձրերդցու
հեղինակութիւն*:

Այս ամենից ակն յայտնի է լինում, որ հնումն
ամէն ժամանակ կաթողիկոսի անուան յիշատակու-
թիւնն անխափան շարունակուել է պաշտամունքների
մէջ: Այդպիսի նախնական կիրարկութեան արդիւնք
է, անշուշտ, այն, որ Հայոց սովորական ժամակար-
գութեան և ո. պատարագի արարողութեան ծիսարան-
ներում յատկացեալ տեղեր կան, ուր սահմանուած է
կաթողիկոսի անուան յիշատակութիւն, և այդ պար-
աւորական է Հայոց եկեղեցական պաշտամունքնե-
րում ամէն տեղ առանց խարութեան երկրի սահման-
ների: Ծիսարաններին նայելով, երեք անգամ ո. պա-
տարագին յիշատակւում է այդ անունը. բացի այդ՝
կիրակամտի և տէրունական տօնիների ժամերգութեանն
ևս սարկաւագը քարոզում է երկու տեղ, «Վասն խա-
ղաղութեան ամենայն աշխարհի» և «Սսասցուք ամե-
նեքեան միաբանութեամբ» քարոզների մէջ: Այնպէս
որ հնութեան աւանդած՝ ձեւակերպութիւնն այդ ծիսա-
րաններում անխախտ պահուած են և պիտի պահուին
նաև ապագային, քանի կայ Հայոց եկեղեցական պաշ-
տամունք:

Հաւաստի լինելով, որ կաթողիկոսի անուան յի-
շատակութիւնն հին սովորութիւն է, մնում է այժմ
պարզել, թէ Երբ էին սկսում յիշատակել կաթողիկո-
սին՝ ձեւնադրութիւնից յառաջ թէ յետոյ:

*) Շարական Յովակիմայ և Աննայի:

Թէպետև Հայոց հայրապետական աթոռի յաջորդըն համազգային ընտրութեամբ է որոշում, որին ձայնակցում էին հնումն և թագաւորներն, իրենց հաւանութիւնը տալով, սակայն նուիրապետական ծայրագոյն աստիճանին հասնում էր նա միմիայն ձեռնադրութեան և օժման միջոցով։ Եկեղեցու ս. խորհուրդների բաշխման նպատակն է նուիրագործել նուիրեալին։ Յայտնի է, որ հնումն քրիստոնէութեան նուիրուած բայց դեռ ս. գրոշմը չընդունած անդամներին եկեղեցին երախայ էր անուանում, նորա քանի դեռ ս. խորհուրդը չէին ընդունել, ս. հաղորդութեան մատչել կամ ս. պատարագին մասնակցել չէին կարող։ Քահանայութեան նուիրեալները, թէկ օրերով ու շաբաթներով յառաջ որոշուած լինի նոցա ձեռնադրութիւնը, յայտնի է, որ տակաւին քահանայ չէն ձանաշում և իրաւունք չունին քահանայագործել, մինչեւ որ չձեռնադրուին, ոչ միայն քահանայագործել, այլև քահանայ անուն, քահանայական փիլոն և եկեղեցական զգեստ կրել, և ոչ եկեղեցում քահանայի տեղ կանգնել և այլն։ Նմանապէս՝ նթէ մէկը նուիրուած է եպիսկոպոսական աստիճան ընդունելու, թէկ վաղուց ընտրուած լինի, ճանապարհ ելած լինի դէպի Մայր Աթոռ և հասած լինի այնտեղ, ուր ձեռնադրութիւնն է լինելու, գիտենք, որ կարող չէ եպիսկոպոսական մատանի կրել, եպիսկոպոս կոչուել և աստիճանին յատուկ գործեր կատարել։ Չեսնադրութիւնն և օծումն են նուիրագործօղ անհրաժեշտ և էական գործօններն, առանց որոնց եկեղեցու պաշտօնեան ոչ այլ ինչ է, ե-

թէ ոչ լոկ նուիրեալ կամ անուանեալ այն պաշտօնի և
աստիճանի համար, գէպի որը նա կոչւում է: Այլ
կերպ և անհասկանալի է աստիճանի սրբութեան գառ-
ղափարը: Զենագրութիւնն և օծումն է, որ մարդուն
հանդիսացնում է Աստուծոյ պաշտօնեայ, առանց ձեռ-
նագրութեան և օծման ամէն նուիրեալ է լոկ աշխարհի
ծառայ և մարդկային իշխանութեան կամակատար:
Շատ հեռու չգնանք, միայն մեր մօտիկ ժամանակնե-
րում եղել են երկու նուիրեալներ, երկու կաթողիկո-
սացու, որոնք նախ քան օծումն իրենց յիշել էին տա-
լիս, և կրում էին հայրապետական պատիւները, սա-
կայն երկուսն էլ չարժանացան ձեռնագրութեան և
օծման, նոցա անունն և չդասուեցաւ կաթողիկոսների
շարքում: Առաջինն է Սահակ, մականունեալն Անագին,
Ժիշակառըն և երկրորդն է հոչակառը Յովսէփ ար-
քայիսկոպոսն Արզութեան:

Տ. Սահակ Կեղեցի ընտրեալ կաթողիկոսն անմիշ-
ջական յաջորդն է Տ. Աղէքսանդր Բ. Բիւզանդացու.
իւր ժամանակի նշանաւոր եպիսկոպոսներից մէկն էր
նա, գործունիայ և արդինաւոր, քանիցս հայրապե-
տութեան արժանի ճանաչուած և հրաժարուած, վեր-
ջապէս 1755 թուին ընտրուեցաւ նա կաթողիկոս,
բայց հեռու մնաց Մայր Աթոռից մերթ յարդի և մերթ
անհիմն պատճառներով մի տարի և ինն ամիս մնաց
կ. Պօլսում և երեք տարի ու կէս կարին նստաւ. բո-
լոր այդ ժամանակ նորա անունն յիշատակում էին
եկեղեցիներում. 1755 թուին լոյս աեստած «Հակաճա-
ռութիւն ընդէմ երկարնակաց» գրքի ճակատին կար-

դում ենք «ի հայրապետութեան տեառն իսահակայ նորապսակ կաթողիկոսի ամենայն Հայոց»։ Նա վարում էր տիրապէս հայրապետական իշխանութիւնն առանց օծուած լինելու, թէև եպիսկոպոս չձեռնազրեց և միւսոն չօրհնեց։ Երկար բացակայութիւնը Մայր Աթոռից, ուր տակաւին նա ոտք չէր դրել, և տարիներ շարունակ ձեռնազրութիւնն և օծումն յետաձգելն առիթ եղան նորա գաճընկեցութեանը։ Այդ տեղի ունեցաւ 1759 թուին, երբ Կ. Պոլոյ պատրիարք Յակով Նալեան Ս. Էջմիածնի նուիրակ երևանցի Սիմէօն վարդապետի աջակցութեամբ ժողով կազմեց, որն և որոշեց Սահակին հրաժարեցնել և նորա փոխարէն ընտրեց Տ. Յակովը Ե. Շամախիսցուն։ Այդ ունեցաւ և իւր լուրջ հետեւանքները։ Տ. Յակով Ե., անշուշտ, համատարած գժգոնութիւններին պատասխանելու համար, և ապագայում նոր անկարգութիւնների առաջն առնելու նպատակով հրատարակեց մի կանոնական կոնդակ, որի մէջ եկեղեցական գործերի վերաբերեալ պէսպէս հրահանգների շարքում աւանդում է և հետեւալ պատուէրներն ամենայն Հայոց կաթողիկոսութեան ընտրուած արքեպիսկոպոսների համար։

ա. Նոքա օծումից յառաջ իրենց անունը կաթողիկոսական կոչումով յիշել չտան եկեղեցական աղօթքների մէջ։

բ. Նոքա օծումից յառաջ կաթողիկոս կոչումն չըկրեն այլ Յիսուսի Քրիստոսի ծառայ (այսինչ) արքեպիսկոպոս և կաթողիկոսացու» կամ «կոչմամբ և ոչ օծմամբ կաթողիկոս» գրուին։

գ. Կնիքների վերայ օծումից յառաջ կաթողիկոս անուն չդնեն, և կնիքը կարմրագեղով չգործածեն.

Դ. Եթէ հնար լինի Մայր Աթոռ գնալ, կաթողիկոսացուն Ս. Էջմիածնից դուրս ուրիշ ոչ մի տեղ չընդունէ ձեռնադրութիւնն և օծումը:

Այս վերջին կէտը Տ. Յ սկոր սահմանեց, երեխ, աչքի առաջնունենալով որ Տ. Կարապետ Գ. Զէյթունցին 1826 Փետրվարի 27-ին հայրապետական ձեռնադրութիւն և օծումն ընդունեց Կ. Պօլսի ո. Աստուածածին եկեղեցում: Պատճառ համարւում է այն թէ ժամանակը պատերազմական էր, Ս. Էջմիածինը Պարսից ձեռքից անցել էր Օսմանցւոց և ճանապարհներն ապահով չէին: Տ. Կարապետ թոյլ տուեց սակայն և մի ուրիշ անտեղութիւն, նաև նոյն եկեղեցում կատարեց և հպիսկոպոսական ձեռնադրութիւն, որ ներելի չէր:

Տ. Յակոր Ե. կաթողիկոսի հեղինակութիւնն իւր ժամանակին շատ բարձր էր Հայոց հոգևորականութեան մէջ գիռ իւր կաթողիկոսութիւնից յառաջ, ուրովհետեւ նաև շատ շատերի ուսուցիչն էր եղել և Մայր Աթոռի գործերի գլխաւոր կառավարիչն էր 3-4 կաթողիկոսի օրով: Նորա ազգեցութիւնն աւելի միծ էր և այն պատճառով, որ պաշտօնական կարենոր գրագըրութիւնների զեկավարն ու պատասխանատուն նաև էր թէ օտարների և թէ ազգայինների հետ**: Նորա այդպիսի հեղինակութեանը պէտք է վերապըս այն, որ նորա կանոնական պատուէրները ճշառութեամբ պահել

*) Զեռագիր Մ. Աթոռոյ թ. 747, ըստ Սեղբ. Շահի. կհնս. 155.

**) Յուց. հայ ձեռագր. Ներս. Դպրանցի, 1892 Թիֆլիս, 50.

էին աշխատում նորա յաջորդները. Տ. Ղուկաս Ա.,
Կալնեցին 1786 թուին իւր կանոնական թղթի մէջ
վերահստատել է միկոյնը*,

Ո՞ր Տ. Յակոբ Ե. Շամախիցու սահմանած գիրքն
համեմատ էր նախնական կարգերին, այդ երեսում է
այն հանգամանքից, որ և նորա յաջորդները մինչև
Տ. Ներսէս Ե. պահպանում էին այն հրահանգները
սրբութեամբ: Տ. Եփրեմ Ա. իւր ընտրութեան պահուն
Ռուսաստանի Հայոց առաջնորդ էր և մինչև իւր հայ-
րապետական օծումն ընդունելը գրում էր «Յիսուսի
Քրիստոսի ծառայ Եփրեմ ծայրագոյն արքեպիսկոպոս
հաստատեալ ի կաթողիկոսութիւն ամենայն Հայոց»
կամ «Ճերմեռանդ աղօթարար Եփրեմ արքեպիսկոպոս
սրբոյ Էջմիածնի հաստատեալ ի կաթողիկոսութիւն
Հայոց»**: Նա մինչև իւր օծումը չէր բանեցնում ոչ
կաթողիկոսական կնիք և ոչ կարմրադեղով թղթեր:

Նախնի սահմանը չպահեց միայն Յովսէփ արքե-
պիսկոպոս Արզութեանը, որ թէս հաստատուած էր,
բայց կաթողիկոսական աթոռին չհասաւ: Ա. Էջմիա-
ծին գնալու ժամանակ նա 1801 Մարտի 9-ին վախճա-
նեցաւ Թիֆլիսում 58 տարեկան հասակի մէջ: Նորա
մի թուղթը ճակատին ունի կաթողիկոսական կարմիր

*) «Ի հաստատութիւն նախնեացն սահմանաց վասն որպէս
սութեան ընտրելոց և կացուցանելոյ գկաթողիկոս ի սուրբ Աթոռն
Էջմիածնից ա. Սեպտ. 157.

**) Թրութիւն 1809 նոյ. 29 ի Ա. Պետերուրա և 1810
Յունիվ. 14 ի Մոսկով (ձեռագիր). ա. նաև Սեպտ. 158.

կնիք և սկսում ու վերջանում է կաթողիկոս յորջյորջմամբ*:

Այս ամենին պէտք է աւելացնենք և այն, որ Հայոց եկեղեցու հին սովորութիւնն է՝ օծումով ուրբագործուած կաթողիկոսի վախճանից յետոյ յիշատաւկել նորա անունն այնքան ժամանակ, մինչև որ նորայաջորդն օծուի և վերջին անդամ յիշէ ու պատարազին նորա անունը: Այդ ժամանակ և տիրապէս դադարում է թէ նորա հայրապետութիւնն և թէ նորատեղապահութ:

Այսպէս էլ բանը մինչև 1844 թուականը.

Ուրիմն մինչեոր տեղի չունենար ձեռնադրութիւնն և օծումը, կարգ չէր՝ նորը նախիր կաթողիկոսին յիշատակել պաշտամունքների ժամանակ, նման ու պէս կարգ չէր, որ նոյն յորջյորջուէր կաթողիկոս, գործածէր կարմրագեղով թղթեր և կնիք, բազմէր Ս. Էջմիածնի Մայր եկեղեցու կաթողիկոսարանի աթոռին և կրէր կոչմանն ու աստիճանին յատուկ պատիւնիր ու արտօնութիւններ:

Այսպէս, մենք տեսնում ենք, որ Ս. Էջմիածնի Մինօղը, որի նախագահող անդամն էր Բարսեղ արքեպիսկոպոսը, իւր օրագրութեամբ 1843 Նոյեմբերի 12-ին ճիշտ թարգման հանդիսացաւ այն տեանդութեան և ծէսերի, որոնք վաղ ժամանակներից հաստատութիւն էին գտել եկեղեցում և որոնք Տ. Յակոբ Ե. կաթողիկոսի կանօնական թղթով (որը

*) Գրութիւն 1800 Օգոստոսին, ի նոր նախիջնան (ձեռագիր):

վերահստատել է և Տ. Դուկաս Ա.) եկեղեցական
վարչական սահմանադրութեան ոյժ էին ստացել:

Բայ այսմ' Տ. Ներսէս Ե. և նորան հետեղ Մատ-
թէսս պատրիարքը վարուել են դարաւոր դիբքին հա-
կառակ, չունենալով ոչ մի բանաւոր հիմք այդպէս
վարուելու: Արդեօք փառասիրութիւնը մղեց նոցա
դէպի այդ, թէ կային կաթողիկոսի առջել զրուած
ստիպառիթ հանգամանքներ, այդ յայտնի չէ:

Տ. Ներսէս Ե. իրեն իրաւունք համարեց հին
կարգն ու սահմանը փոխելու, հիմնուելով 1836 թուի
Պալածէնիէի 25-րդ յօդուածի վերայ, որն առում է.

«Պատրիարքն հետեղով վաղեմի կանոնա-
դրութեանց կուսաւորչական եկեղեցւոյ Հայոց և հա-
սոււ լեալ կանխաւ կարծեաց Սիւն հոգոսին
էջմիտ ծնի, տայ զվախճանական վճիռ ամե-
նայն պարզ հոգեոր գործոց վերաբերելոց
առ վարդապետութիւնն հաւատոյ, առ պաշ-
տամունս եկեղեցւոյ և առայլս այսպիսիս:

Յայտնի է, որ կաթողիկոսն ամենին բանի տեղ
չգրեց ոչ վաղեմի կանոնադրութիւնն և ոչ Սինօղի
կարծիքը. նա թ. 22 կոնդակով, ինչպէս տիսանք,
հրամայեց տեղակալին յիշատակել իւր անունն այն
ժամանակ, երբ ինքը դեռ օծուած չէր: Հայոց եկեղե-
ցու համար այդ ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի անտեղի
նորամուծութիւն,

Այսպէս 1844 թուից սկսած վերտցաւ հին կար-
գը, որովհետեւ Տ. Ներսէսի անմիջական յաջորդը Տ.
Մատթէսս Ա. ոչ միայն այդ խնդրում հետեղ հան-

գիսացաւ նորան, այլ աւելի և հեռու գնաց: Նա իրեն նիրեց հայրապետական օրհնութեան և ժողովարարութեան կոնդակներ տալ, մինչև անգամ Այվագեան Գարբիէլ վարդապետին կոնդակով ականակուռ խաչ պարգեց և, որ աւելի նշանաւորն է, իւր ձեռնազրութեան ժամանակ ինքը պատարագ չարաւ, ինչպէս պահանջում էր հին կարգը, այլ պատարագել տուեց մի եպիսկոպոսի: Աւետարանական Հայերի հալածիչ և կաթոլիկների ոչ անկեղծ բարեկամ Տ. Մատթէոս Աշատ բաների մէջ շփոթեց սկզբունքը կամայականութեան հետ, իւր մասին նա աւելի լաւ վկայտկան չէր կարող տալ քան իւր այն տեսրակը, որով ապացուցանում է Դաշանց Թղթի ստուգութիւնը, մի բան, որ Հայոց եկեղեցին ամեննեին չէ ընդունիլ*: Անտարակոյն նա իւր շատ հեղինակութիւններով հանդիսանում է իրրեկ եռանդուն ջատագով Հայոց եկեղեցու նախնի վարդապետական աւանդութիւններին, սակայն թէ նոցա մէջ և թէ մանաւանդ յիշեալ տեսրակով նա յաճախ մեղանչում է հետեղականութեան դէմ:

Թէ ինչո՞ւ Տ. Մատթէոսի յաջորդներն էլ չըողոքեցին Տ. Ներսէսի գործած նորաձեռութեան դէմ, կա-

*.) Մատթէոս կաթողիկոսի «Հաստատութիւն Դաշանց թըղթոյն, Մոսկով 1861» կամ Ճնաքաղ, 1861, մե. և ժԶ:

«Հայելի աստուածային չնորհաց, 1862» եր. 135—165:

«Դաշանց թղթոյն քննութիւնն և հերքումը, Կար. Վարդապետ Շահնազարեան, Պարիս 1862»:

«Պատասխանիք Մխիթարաց քահ. Ակհացւոյ, Երուսաղէմ, 1865»

և այլն:

բելի է լացատրելնախ այն մարդկեղէն թուլութեամբ
որ փառասիրութիւն է կոչւում, և երկրորդ զուցէ և
այն բանով, որ Հայոց բարձր հոգեորականութիւնը
մանաւանդ արդէն ընտելացիլ էր կամայական ուշէն
զործեր վարելու այն ոգւով, որ տեղական կարգերն ու
հայեացքնիրը թոյլ են տալիս: Գուցէ նշանակութիւն
ունեցաւ այդ ինդրում և այն հանգամանքը, որ մի
տնգամ արդէն Ս. Էջմիածնի Սինօդում Տ. Ներսէսի
ժամանակից ձեակերպութիւն առել էր կաթողիկոսի
անուան յիշատակութեան կարգը, որին համեստմ էին
տեղապահ արքեպիսկոպոսնիրը մեքենաբար, պարզ
ձեականութեան գործ համարելով այն:

Այսպէս թէ այնպէս՝ ներկայիս կարգը մեղ ժա-
ռանկութիւն է մնացել Տ. Ներսէս Ե. կաթողիկոսից:

Ե.

Այստեղ հարկ ենք համարում կանգ առնել:
Տ. Ներսէս Հայոց հայրապետաների շարքի մէջ,
անշուշտ, շատ պատկանելի անուն ունի, սակայն նո-
րա համբաւը հայրապետութիւնից շատ աւելի յառաջ
էր հոչակուած: Նորա յիշատակները կան և մնում են
յաւերժաբար: Նա եղաւ Ս. Էջմիածնի բարձրագոյն ո.
ժողովի կամ Սիւնհոգոսի հաստատութեան նախապատ-
ճաններից մէկն և գլխաւորը 1808 Մայիսի 25. ին, նա
եղաւ Մայր Աթոռի աղետալի օրերում, 1822—1826
թուերին, ելք Տ. Եփրեմ չկարողացաւ մնալ Ս. Էջ-
միածնում, նորա պարտքերի մէծագոյն մտսը վճարու-

դըն և աթոռի պատիւը փրկօղը, նա է հիմնել Ներսիս-
սեան ազգային հոգեոր զպրոցը Թիֆլիսում 1824
թուին, նա է վերջապէս Աբարատեան աշխարհն ու
Մայր Աթոռ Ս. էջմիածինը մահմէտական լծից ազա-
տող և Ռուսաց հզօր կայսերութեան հովանու տակ
գնող առաջաւոր հոգեորականներից մէկն և զլիսաւորը
1827 թուին: իւր կաթողիկոսութիւնից յառաջ կատա-
րուծ այդպիսի գործերով Տ. Ներսէս յաւերժացած է
պատմութեան մէջ և երրէք չպիտի մոռացուի:

Ինչ վերաբերում է նորա կաթողիկոսութեանը,
ճշմարտութեան դէմ մեղանչած չենք լինիր, եթէ ասենք,
որ նա ունեցաւ անյաջող հայրապետութիւն: Թիւ 22
կոնդակը, որ նա 1844 Յունվարի 21-ին տուեց տե-
ղապահ Բարսեղ արքիպիսկոպոսին, նորա կաթողիկո-
սութեան նախարանն է, որին համապատասխան ըն-
թացան նորա զորչերը զբէթէ մինչի նորա վախ-
ճանը:

Այդ նախարանին համեմատ նա յաճախ շփոթեց
սկզբունքը հաճոյքի հետ: Զգտելով զործել իբրև ծայ-
րագոյն հոգեոր պետ ինքնուրոյնաբար, չստ անզամ
նա ինքն իրեն հակասում էր, հակասելով և իւր
անցեալին: Բոլոր ինդիբներում նա զբէթէ մինոյն
ուղղութիւնը պահեց ինչոր և պարզ հոգեոր խնդիր-
ներ լուծելիս: Ս. էջմիածնի Սիւնհողոսը, որի համար
ինքն Տ. Ներսէս ե. զիս իւր վարդապետ և հպիսկո-
պոս ժամանակ մեծ ջանք ու համակրութիւն էր սպա-
ռել, լոկ անուանական գոյութիւն ունէր նորա ժամա-
նակ, զբէթէ ջլատուած էր և Պալաժենիէն: Այս ամէնը

տիսնում ենք նորա գործերից։ Մինօդի անդամներ չեր
նշանակում, և եթէ նշանակում էր, ակամայ, լոկ ձեի
համար։ Վիճակաւորների աթոռները թափուր էր պա-
հում և գրեթէ ամէն տեղ իւր վերայ առաւ վիճակա-
ւորի պարտականութիւնը։ Հոգեոր գործերի կառավա-
րիչներ նշանակեց թեմերում մեծ մասով աշխարհա-
կան մարդիկ, որոնք պատասխանատու էին միայն
կաթողիկոսի առաջ։ Մայր Աթոռի միաբանութիւնը
ցրուեց և վանքերը դատարկ պահեց։ Նորա ահից շատ
վարդապետներ փախան Տաճկաստան և այլ երկիրներ,
Շինարար ձեռք ունէր նա, այս. սակայն ամեն ինչ ա-
նում էր իւր եղական կամքով, չատ հազիւ միայն կը-
շիռ տալով և հետեւլով հասարակաց ձայնին։

Այնպէս որ իւր պէս պէս թանգագին բարեմաս-
նութիւններով հանգերձ Տ. Ներսէս Ե. ոչ միայն ջլա-
տեց Պալաժենիէն, որը կայսեր բարեհաճութեամբ
1842-ից հետէ վերաքննելի էր ճանաչուած, այլ և Հայոց
եկեղեցու սահմանադրական ողին միան զամայն իւր
կամքի տակ գրեց, կաթողիկոսական իշխանութեան և
իրաւասութեան մէջ կեզրոնացնելով ամեն ազգային
եկեղեցական գործի հեղինակութիւն։

Ինչպէս բնական էր սպասել, եռանդուն հայրա-
պետի այդպիսի ընթացքն յառաջ կոչեց թշնամիներ
և հակառակորդներ։ Կաթողիկոսների համար ԺԹ. դա-
րում այդպիսիներ միշտ եղել են մահաւանդ Ս. Էջ-
միածնի միաբանութեան մէջ։ Ոչ մի կաթողիկոս ա-
զատ չէ եղել ներքին և արտաքին թշնամիներից, ո-
րոնց մեծ մասն իրենց առելութիւնն ու կիրքն յայտ-

նել են, յաճախ ունենալով անձնական շարժառիթներ։
Դեռ Տ. Ներսէսի նախորդը Տ. Յովհաննէս ունեցաւ
իւր ընտանի հակառակորդները Ս. Էջմիածնի միա-
բաններից ութն հոգի, որոնց պարագլուխներն էին
Տ. Ներսէսի այն ժամանակուայ մաերիմները, Միմէօն
արքեպիսկոպոս Բզնունի և Գրիգոր արքեպիսկոպոս
Արքունիցի*։ Նորա 1833 թուին յառաջ բերին վանքի
մէջ մի խլրառումն, որ շարունակուեցաւ բաւական ժա-
մանակ։ Տ. Ներսէս էլ ունեցաւ իւր բողոքաւորնե-
րը, Քսան և վեց յօդուածից բաղկացած մի ամրաս-
տանագիր հասիլ էր բարձր կառավարութեանը դեռ
1855 թուին։ Սորան յաջորդում է Աշտարակեցի Գէորգ
եպիսկոպոս Վեհապետեանի ամբաստանագիրը, որ նա
1856 Փետրվարի 4-ին ուղղել է «Առ շէֆն կորպուսին
ժանդարմի տէր գիներալ ատիւտանտի և կոմս Առլո-
վայ» ութն յօդուածից բաղկացած։ Գէորգ եպիսկոպո-
սը Տ. Յովհաննէս կարքեցու ձեռնասուն աշակեր-
տըն և մտերիմն էր։ Այդ ժամանակ գուրսը, հհոռւ
հիւսիսում, շատ զինուած էին կաթողիկոսի դէմ և
նորա հին բարեկամները, Լազարեան Յովհաննէս և
Խաչատուր աղաները, որոնք մեծ ազգեցութեւն ու-
նին Հայոց եկեղեցական գործերի վիրարերմամբ
բարձր կառավարչական շրջաններում։ Նոցա գործա-
կից և ձայնակից էր Բեսարարիոյ և Նոր Նախիջևա-
նու թեմակալ առաջնորդը, Վեհապետեան Մատթէսս
արքեպիսկոպոս, որ նոյնպէս Տ. Յովհաննէս կաթո-
ղիկոսի սիրելիներից մէկն էր։ Լազարեանների թշնա-

) Դիւան Ա.-Բ. 276.—Ա. Երիցեան, Ամ. Հ. Կաթող. 165.

մութեան պատճառն էր այն, որ Տ. Ներսէս զլացաւ նոցա խնդրած չհաս պատկի հրամանը: Պէտք էր որ նոցա երկու բոյրերի որդիք աժաւսնանային Խաչատուր աղայի երկու գուստրների հետ (Դեկտանով և Արամելիք): Սակայն այն, ինչ որ զլացաւ նոցա կաթողիկոսը, համարձակութիւն ունեցաւ կատարելու վեհապետեան Մատթէոս արքեպիսկոպոսն, ինարկէ, վստահ լինելով Լազարեանների պաշտպանութեան վերայ: Այդ այնպիսի կանոնական գեղծումն էր, որ ծերունի հովուապետին անկարելի էր ներողամիտ լինել, ուստի և զինուեցաւ թէ արքեպիսկոպոսի և թէ Լազարեանների գէմ, իւր հայրապետական իշխանութեամբ նոցա պատասխանատուութեան հրաւիրելով*:

Կաթողիկոսի հակառակորդներին շատ նպաստաւոր եղաւ այն հանգամանքը, որ նորա մաերիմ բարեկամն և պաշտպանը, Կովկասեան փոխարքայ իշխան Մ. Վարանցով (1845 Մարտի 26-ից 1854 Նոյեմբերի 29) այդ ժամանակ արգէն հեռացել էր պաշտօնից և փոխարքայութիւնը վարում էր գեներալ ազիւզանա Մուրավիէվը, որ բոլորովին զուրկ էր իւր նախորդի բարեմասնութիւններից, թէպէտե զինուորական հըմատութիւններով շատ օժտուած անձն էր: Սա փոխարքայութիւնը վարեց համարեա մի տարի ու կէս (29 Նոյ. 1854-ից 22 Յուլիսի 1856) իսկապէս այն ժամանակամիջոցում, երբ Տ. Ներսէս Ե. կաթողիկոսի հակառակորդները գլուխ էին բարձրացուցել: Նոցա արք-

*) Այս երկում է այն կոնդակից, որ կաթողիկոսը գրել է Լազարեաններին 1856 Սեպտեմ. 2-ին թիւ 297:

տունջնիրը գրով և խօսքով այնքան զայրացել էին, որ վերջապէս բարձր կտոռավարութիւնն ստիպուեցաւ ազդարարել կաթողիկոսին և հրաւիրել նորան յարգելու Պալաժէնիէի տրամադրութիւնները: Առ այդ Տ. Ներսէս Ե. փութաց 1856 Յուլիսի 24-ին թիւ 255 գըրութեամբ հաղորդել Մուրավիկին իւր ընդարձակ բացարութիւնները, որոնցից երեսոմ է նորա փայտած վարչական գրութիւնը: Նոյն տարին Սեպտեմբերի 1-ին իշխան Վարանցովը Մոսկվայից գրում է կաթողիկոսին մի նամակ, որով իւր սրտի վիշտն է յայտնում այն ամենի համար, որ տեղի է ունեցել ծերունի հովուապետի ու կառավարութեան մէջ: Այդ առթիւ նորան սփոփելու և հանգստացնելու համար իշխանը գրում է և հետեւալը. «Ես իմացայ, ասում է, միքանի մանրամասնութիւններն այն ամենի, ինչ որ հանդիպել է ձեզ, և հոգով չափ ցաւում եմ, որ ձեր նախիջեանու արքեպիսկոպոսի և պ.պ. Լազարեանների մեքենայութիւնները որոշ չափով, թէև ժամանակաւոր, յաջողութիւն գտել են: Այժմ այդ ամենը կարեւոյն չափ ուղղուած է և գուք այսուհետեւ գործ կ'ունինաք ոչ թէ նախարարութեան, այլ միմիայն նոր փոխարքայի, իշխան Բարեատինսկու, հետ, որը սրտանց ձեզ յարգում է և հոգով ձեզ նուիրուած է: Նա յատկապէս կայսեր կողմից առ ձեզ ունի հաճելի յանձնարարութիւն այդ ամենի մասին և ես համոզուած եմ, որ ձեր գործերի նկատմամբ ամեն ինչ գեպի լաւը կ'ուղղուի*:

*) Ա. Երազ. Պատր. Յ. Ա. Շերսև Կ. և Վարդազով, 89.

Թէպէտե 1856 աշնանն իշխան Բարեատինովին ժամանեց Թիֆլիս և սկսեց իւր բանագնացութիւնները կաթողիկոսի հետ, սակայն ծերունի հովուապետին վիճակուած չէր վայելել իւր ջանքերի պառուզները. 1857 Փետրվարի 13-ին, պաշտօնական բանակցութիւնների լաւ ժամանակ, Տ. Ներսէս Ե. կնքեց իւր մահկանացուն Թիֆլիսում 86 տարեկան հասակում:



Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԵՐԸ

Հիսուած բանից նախնի պատմագրաց հայոց,

Վելէննայ 1877. Թիֆլ գիրք:

Հայոց ներանսական կրօնի: Վարչապ. 1879.

Ստեփաննու Օրվելեան Ռդբ. ի և. Կաթուղիկէն,

Թիֆլիս 1885.

Հայոց վաճեմեր. Մոսկվա 1886,

Թուլմա Մեծափեցու Յիշատակարանը, Թիֆլ. 1892.

Յովհաննես Թիվուրացին եւ իւր սադերը, Թիֆ. 1892

Նոր ժողովածու Միջնադարեան Հայոց տաղեր և

ոտանաւորներ. Հրոս պլատի:

Համամ արեւելցի. Վաղարշապատ 1896.

Ա. Լուսաւորչի աջը. Վաղարշապատ 1896.

Տ. Պետրոս Ա. Գետապարձ. Վաղարշապատ 1897.

Գրիգորիս Ալբանացին եւ իւր սադերը. Թիֆ. 1898

Մկրտիչ Նազար եւ իւր սադերը. Վարչապ. 1898.

Յակոբ Կարենցի. Վաղարշապատ 1903.

Դ Ա Ս Ա Գ Բ Ք Ե Բ

Գրաբառի խոհարհումը, Թիֆլիս 1881

Գրաբառի հոլովումը: Թիֆլիս 1881.

Շաղկամաղ արձակ եւ եւ չափածոլ բանից յերիս

շրջանս. Թիֆլիս 1881.

Բառացուցուկ Ա. Մաղկաքաղի. Համալ, Թիֆլ. 1885.

Նախառաւիլ (Գ. տապագը.) Վաղարշապատ 1905.

Հասցէն՝ Աղէքսանդրոսով, Աղէքսանդրեան փողոց, 60

1601. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1602. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1603. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1604. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1605. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1606. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1607. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1608. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*

Table. 10. 3. 4.

1609. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1610. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1611. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1612. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1613. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1614. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*
1615. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*

1616. *Constitutio* *Imperialis* *Imperii* *Romanorum*

